ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԸ

(2016թ.)

(ՀՀ իրավապահ մարմինների կամայականության և ՀՀ Ոստիկանության վստահության համաթվերը)

HELSINKI CITIZENS ASSEMBLY

NORWEGIAN HELSINKI COMMITTEE

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՈՂ ՀԱՄԱԹՎԵՐԸ

(2016թ.)

(ՀՀ իրավապահ մարմինների կամայականության և
ՀՀ Ոստիկանության վստահության համաթվերը)

Հայաստան 2017 թ.

Սույն զեկույցը պատրաստվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից իրականացվող «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում՝ Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական օժանդակությամբ:

Քանակական ուսումնասիրությունը և վերլուծությունը իրականացվել է «Հասարակական հետազոտությունների առաջատար խումբ» հասարակական կազմակերպության (APR Group) ներգրավմամբ:

Զեկույցում հնչած կարծիքները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Հեղինակային խումբ՝

Ռուբեն Սարգսյան՝ սոցիոլոգ, փորձագետ
Արթուր Սաքունց՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ
Օֆելյա Զալյան՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ծրագրերի համակարգող

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

Հետազոտության մեթոդաբանությունը 5

Տեղեկատվության հավաքման մեթոդ..... 6

Հետազոտության ընտրանք..... 6

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական պատկերը 8

Համաթվերի հաշվարկման մեթոդաբանություն.....11

Համաթվերի հաշվարկման բանաձևերը.....13

Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը.....15

Ոստիկանության վստահության համաթիվ..... 48

ԱՄՓՈՓՈՒՄ 74

Ա. «Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվ».....74

Բ. «Ոստիկանության վստահության համաթիվ» 79

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Զեկույցում ամփոփված են 2016 թ. օգոստոսին ՀՀ բոլոր մարզերում և Երևան քաղաքում Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) կողմից իրականացված կրկնվող սոցիոլոգիական հետազոտությունների արդյունքները:

Հետազոտության հիմնական նպատակն է հաշվարկել իրավապահ մարմինների գործունեությունը բնորոշող համաթվերը, մասնավորապես՝ ՀՀ իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը և ՀՀ Ոստիկանության վստահության համաթիվը:

Նշված համաթվերի հաշվարկման նպատակով մշակվել է մեթոդոլոգիա և հետազոտության գործիք, որոնց հիմքում ընկած են ՌԴ-ում գործող «Օբշեստվեննի վերդիկտ» հիմնադրամի (Фонд “Общественный вердикт”) և «Լեվադա-Ցենտր» հետազոտական հասարակական կազմակերպության (АНО “Левада-Центр”) կողմից համատեղ իրականացվող նմանատիպ հետազոտության մեթոդոլոգիան և գործիքները, որոնք տեղայնացվել են և 2013 թ. ապրիլ-մայիս ամիսներին «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը ՀՀ հյուսիսային մարզերում» պիլոտային հետազոտության շրջանակներում փորձարկումից հետո կատարելագործվելով՝ 2015թ. կիրառվել են ՀՀ բոլոր մարզերում և ք. Երևանում:

Սույն զեկույցում ներկայացված է տեղեկատվության հավաքման մեթոդաբանությունը՝ ներառյալ հետազոտության ընտրանքի նկարագրությունը, համաթվերի հաշվարկման մեթոդաբանությունը, այդ թվում՝ հաշվարկման բանաձևերը, ինչպես նաև հետազոտության արդյունքները: Առանձին անդրադարձ է արվել իրավապահ մարմինների կամայականության համաթվին, ոստիկանության վստահության համաթվին, ինչպես նաև ներկայացված են իրավապահ մարմինների նկատմամբ վերաբերմունքը և բնակչության անհանգստության մակարդակը: Արդյունքները ներկայացվում են 2015թ. իրականացրած նմանատիպ ուսումնասիրության արդյունքների հետ համեմատությամբ:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության նպատակը

Հետազոտության նպատակն է հաշվարկել ՀՀ իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը (այսուհետ՝ կամայականության համաթիվ) և ՀՀ Ոստիկանության վստահության համաթիվը (այսուհետ՝ վստահության համաթիվ):

Հետազոտության խնդիրները

Սույն հետազոտության խնդիրներն են՝

1. պարզել ՀՀ բնակչության կողմից իրավապահ մարմինների նկատմամբ վստահության մակարդակը,
2. պարզել ՀՀ-ում իրավապահ մարմինների կողմից քաղաքացիների նկատմամբ ապօրինությունների և կամայականությունների դրսևորման մակարդակը,
3. պարզել ոստիկանության հետ ՀՀ բնակչության համագործակցության պատրաստակամության մակարդակը,
4. պարզել ՀՀ իշխանությունների կողմից քաղաքական ընդդիմադիրների (հակառակորդների) դեմ իրավապահ մարմինների օգտագործման հաճախականությունը,
5. հաշվարկել քաղաքացիների անհանգստության համաթիվը,
6. պարզել իրավապահ մարմինների կամայականություններից բնակչության պաշտպանվածության մակարդակը,
7. հաշվարկել անձնական անհանգստության համաթիվը,
8. բացահայտել ոստիկանության կամայականություններից պաշտպանվելու նպատակով հանդես եկող այլ իրավապահ մարմինների (դատարաններ, դատախազություն)՝ որպես պաշտպանության մեխանիզմի արդյունավետությունը՝ ըստ հարցվողների,
9. իրականացնել վերոնշյալ ցուցանիշների համեմատական վերլուծություն՝ ըստ տարիների:

Տեղեկատվության հավաքման մեթոդ

Տեղեկատվության հավաքման համար կիրառվել է քանակական հարցազրույցների մեթոդը, ինչը հնարավորություն է տվել ստանալու ըստ բնակավայրերի բոլոր սոցիալական խմբերի կարծիքը՝ խնդրի վերաբերյալ: Շնորհիվ ներկայացուցչական ընտրանքի՝ ստացված տեղեկատվությունը հնարավոր է տարածել տարբեր բնակավայրերի վրա ամբողջությամբ, պարզել կարծիքների տարածվածությունը և բաշխվածությունը, դուրս բերել օրինաչափություններ: Իրականացվել են անմիջական հարցազրույցներ՝ հարցազրուցավար-հարցվող դեմ առ դեմ զրույցի միջոցով:

Որպես հետազոտության գործիք կիրառվել է ստանդարտացված հարցաթերթը, որը բաղկացած է եղել փակ և կիսափակ հարցերից: 2016թ. կիրառվել է 2015թ կիրառված հարցաթերթիկը՝ գործածվել է CAPI-ի տեխնիկայի միջոցով[1]:

Հետազոտության արդյունքները վերլուծվել են վիճակագրական SPSS ծրագրի միջոցով: Իրականացված հետազոտությունը կրկնվող/տրենդային հետազոտություն է[2]:

Հետազոտության ընտրանք

Հետազոտությունն իրականացվել է 2015 և 2016 թթ. օգոստոս ամիսներին, ուսումնասիրությունները երկու դեպքում էլ իրականացվել են օգոստոս ամսին Հայաստանի բոլոր մարզերում և Երևան քաղաքում բնակվող 18 տարեկան և ավելի բարձր տարիքի բնակչության շրջանում: Համաձայն ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից 2012 թ. մայիսի 7-ին հրապարակված «Տեղեկատվություն. ՀՀ Ազգային ժողովի 2012 թ. մայիսի 6-ի ընտրությունների համամասնական ընտրակարգով քվեարկության ընթացիկ արդյունքների (նախնական)» տվյալների՝ նշված տարիքային խմբերի՝ ընտրողների թիվը կազմում է 2524794 մարդ: Այսպիսով՝ հետազոտության գլխավոր համախմբությունը կազմել է 2524794 մարդ, որտեղ հետազոտության տվյալների ±2,8% ճշգրտության դեպքում 95% վստահության միջակայքում ընտրանքային համախմբությունը հաշվարկվել է 1200 մարդ:

Ուսումնասիրության ընտրանքները կառուցվել են միանման մեթոդաբանությամբ: Երկու դեպքում էլ կառուցվել է բազմաստիճան (շերտավորված) նպատակաուղղված պատահական ընտրանք: Ընտրանքի կառուցման սկզբնական փուլերում նպատակաուղղված կերպով առանձնացվել են ընտրանքային միավորները

---

[1] Computer-assisted personal interviewing՝ կիրառման ժամանակ, հարցազրույցավարը հարցվողի հետ դեմ առ դեմ հարցազրույցի ժամանակ ստացված տեղեկատվությունը մուտքագրում է համակարգչում(ноутбук) տեղադրված էլեկտրոնային հարցաթերթում: Ծրագիրը թույլ է տալիս ապահովել իրականացվող հարցազրույցների վերահսկողության բարձր մակարդակ:

[2] Տրենդային հետազոտություններն իրականացվում են միևնույն գլխավոր համախմբության համար, որոշակի ժամանակային միջակայքում, հարաբերականորեն միանման մեթոդիկայով: Տրենդային հետազոտությունների նպատակն է սոցիալական փոփոխությունների միտումների բացահայտումը՝ տվյալ դեպքում սոցիալական տրամադրվածությունների:

(մարզերը, բնակավայրերը), այնուհետև իրականացվել է պատահական ընտրություն: Պատահական ընտրությունը կատարվել է «համակարգված քայլի» սկզբունքով:

Ընտրանքի կառուցումն իրականացվել է հետևյալ փուլերով.

1. Մարզերի ընտրություն

Հետազոտությունում ընդգրկված են ՀՀ 10 մարզերը և Երևան քաղաքը: Հետազոտության արդյունքների ներկայացուցչականությունը տվյալ մարզերի համար ամբողջությամբ ապահովվել է:

2. Բնակավայրերի/հարցման կետերի ընտրություն

Ապահովելու համար գյուղական և քաղաքային բնակավայրերի բնակիչների ներկայացվածությունը ընտրանքում՝ նախ հաշվարկվել է յուրաքանչյուր մարզի գյուղական և քաղաքային բնակավայրերում ապրողների տոկոսային հարաբերակցությունը: Ըստ այդմ՝ որոշվել է, թե յուրաքանչյուր մարզում իրականացվելիք հարցազրույցների որ մասը պետք է անցկացնել քաղաքներում, որ մասը՝ գյուղերում: Հաշվարկելու համար, թե քանի քաղաք և գյուղ պետք է ընդգրկել ընտրանքում, քաղաքներին կամ գյուղերին բաժին ընկնող հարցվողների թիվը բաժանվել է քաղաքի կամ գյուղի համար հաշվարկված օպտիմալ թվին: Յուրաքանչյուր գյուղում օպտիմալ համարվում է միջինում 6 հարցազրույց, ընդ որում՝ այդ թիվը չպետք է գերազանցի 7-ը: Ընտրված քաղաքում օպտիմալ է համարվել միջինում 11 հարցազրույցը, ընդ որում՝ այդ թիվը չի գերազանցել 25-ը: Ընտրված քաղաքում կամ գյուղում իրականացվելիք հարցազրույցների թիվը հաշվարկելիս նույնպես հաշվի է առնվել տվյալ համայնքի բնակչության համամասնությունը:

Յուրաքանչյուր մարզից համայնքներն ընտրելիս հաշվի է առնվել կենտրոնի հետ ունեցած հեռավորությունը: Այդպիսով՝ առանձնացվել է հարցման կետերի 3 տիպ՝

1. մարզկենտրոն,
2. մարզային համայնքներ, որոնք գտնվում են մարզկենտրոնի և ծայրամասերի մեջտեղում,
3. ծայրամասային համայնքներ, որոնք գտնվում են մարզի ծայրամասում:

3. Տնային տնտեսության ընտրություն

Ընտրանքի կառուցման երրորդ փուլում առանձնացվել է երրորդ շերտը. ընտրվել են տնային տնտեսությունները: Յուրաքանչյուր հարցման կետում տնային տնտեսությունների ընտրությունն իրականացվել է համակարգված քայլի միջոցով:

4. Հարցվողի ընտրություն

Չորրորդ փուլում տնային տնտեսության 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անդամներից իրականացվել է հարցվողի ընտրություն՝ պատահականության

սկզբունքով: 2015թ. հետազոտության ընթացքում պատահականությունն ապահովելու նպատակով կիրառվել է տնային տնտեսության անդամների «ամենավերջին ծննդյան օրվա» սկզբունքը: Յուրաքանչյուր տնային տնտեսությունից հարցվել է միայն մեկ անձ: Իսկ 2016թ. պատահականությունն ապահովելու նպատակով կիրառվել է CAPI-ի ծրագրում ներդրված «Քիշի աղյուսակը»[3]:

Երկու դեպքում էլ հարցվածների թիվը կազմել է 1200-ական մարդ:

Հարցվածների սոցիալ-ժողովրդագրական պատկերը

2015թ. հետազոտության ժամանակ հարցվողների 26.3%-ը եղել են տղամարդիկ, իսկ 73.7%-ը՝ կանայք, 2016թ.՝ 33.8% եղել են տղամարդիկ, իսկ 66.3%-ը կանայք:

Հարցվողների տարիքային բաշխումը բերված է ստորև՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1
Հարցվողների տարիքային բաշխումը

Տարիքային խումբ	Հարցման տարեթիվը	
	2015թ.	**2016թ.**
18 -25 տարեկան	11.1%	14.8%
26 -35 տարեկան	19.6%	20.4%
36 – 45 տարեկան	14.4%	16.5%
45 – 60 տարեկան	29.1%	26.3%
61 և ավելի տարեկան	25.8%	21.9%
Ընդամենը	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումը՝ ըստ կրթության բերված է Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2
Հարցվողների բաշխումն ըստ կրթության

	Հարցման տարեթիվը	
	2015թ.	**2016թ.**
Տարրական	0.5%	0.4%
Թերի միջնակարգ (8-ամյա)	7.0%	6.0%
Միջնակարգ (10-12-ամյա)	34.3%	37.1%

[3] «Քիշի աղյուսակն» (kish grid) օգտագործվում է պատահական ընտրանքի սկզբունքի հիման վրա իրականացվող հարցումների ժամանակ, որը սահմանում է ալգորիթմ՝ հարցազրույցի նպատակով տնային տնտեսության (SS) անդամներից մեկի ընտրությունը: Ընթացակարգը մշակված է այնպես, որ SS յուրաքանչյուր անդամ հարցազրույցի համար ընտրվելու հավասար հնարավորություն ունի: Անվանումը դրվել է տվյալ մեթոդի մշակողի անունով՝ Լեսլի Քիշի (Leslie Kish):

Միջնակարգ մասնագիտական	27.7%	22.3%
Թերի բարձրագույն	3.3%	4.1%
Բարձրագույն	26.5%	29.7%
Ետբուհական (գիտական աստիճան)	0.7%	0.4%
Հրաժարվում եմ պատասխանել	0.1%	0.0%
Ընդամենը	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումը, ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի, բերված է Աղյուսակ **3**-ում:

Աղյուսակ 3
Հարցվողների բաշխումը՝ ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի

Եկամուտը՝ դրամային արտահայտությամբ	**Հարցման տարեթիվը**	
	2015թ.	**2016թ.**
Մինչև 35000 դրամ	10.30%	14.40%
35001-ից մինչև 65000 դրամ	25.90%	25.70%
65001-ից մինչև 150000 դրամ	41.00%	39.50%
150001-ից մինչև 350000 դրամ	17.3%%	16.40%
350001 դրանից ավելին	3.80%	4.00%
Դժվարանում եմ պատասխանել	0.30%	0%
Հրաժարվում եմ պատասխանել	1.50%	0%
Ընդամենը	**100.00%**	**100.00%**

Հարցվողներն իրենց սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրել են՝ պատասխանելով հետևյալ հարցին՝ «Խնդրում եմ նշել, թե ստորև բերված դատողություններից որն է առավել լավ բնութագրում Ձեր տնտեսական դրությունը:» Պատասխանները ներկայացված են աղյուսակ **4**-ում:

Աղյուսակ 4
Հարցվողների բաշխումը՝ ըստ իրենց սոցիալ-տնտեսական վիճակի

Տնտեսական դրություն	Հարցման տարեթիվը	
	2015թ.	**2016թ.**
Գումարը չի բավարարում սնունդ գնելու համար	27.8%	23.0%
Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար	35.1%	37.2%
Գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար	24.1%	24.0%

Գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար	12.6%	15.8%
Հրաժարվում եմ պատասխանել	0.4%	0%
Ընդամենը	100.0%	100.0%

«Ձեզ ո՞ր խավի ներկայացուցիչ եք համարում» հարցի պատասխանները ներկայացված են աղյուսակ **5-ում**:

Աղյուսակ 5 Հարցվողների բաշխումը ըստ խավի		
Խավ՝	Հարցման տարեթիվը	
	2015թ	**2016թ.**
Վերին խավի	3.3%	1.9%
Միջին խավի վերին հատված	11.6%	12.1%
Միջին խավի միջին հատված	56.1%	53.7%
Միջին խավի ստորին հատված	12.7%	15.7%
Միջինից ցածր խավ	10.8%	11.0%
Չքավոր	4.7%	5.7%
Դժվարանում եմ պատասխանել	0.3%	0%
Հրաժարվում եմ պատասխանել	0.6%	0%
Ընդամենը	100.0%	100.0%

Հարցվողների բաշխումն՝ ըստ բնակավայրերի տիպերի, ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6 Հարցվածների բաշխումը ըստ բնակավայրի տիպի		
Բնակավայր	Հարցման տարեթիվը	
	2015թ.	**2016թ.**
Քաղաքային	72.0%	72.0%
Գյուղական	28.0%	28.0%
Ընդամենը	100.0%	100.0%

Հարցվածների սեռային բաշխվածությունը՝ ըստ բնակավայրերի տիպերի, ներկայացված է Աղյուսակ **7-ում:**

Աղյուսակ 7 **Խաչաձև վերլուծություն՝ ըստ հարցվածների սեռի և բնակավայրի տիպերի**						
		Բնակավայրի տիպը				Ընդամենը
	2015թ.		**2016թ.**			
	Քաղաքային	Գյուղական	Քաղաքային	Գյուղական		
Հարցվողի սեռը	Արական	69.3%	30.7%	74.1%	25.9%	100.0%
	Իգական	73.0%	27.0%	70.7%	29.3%	100.0%
Ընդամենը		72.0%	28.0%	72.0%	28.0%	100.0%

Ինչպես երևում է Աղյուսակ 1-7ում՝ 2015թ և 2016թ. հետազոտությունների ընթացքում գրեթե պահպանվել են հարցվողների համամասնությունները՝ ըստ հիմնական բնութագրիչների:

Համաթվերի հաշվարկման մեթոդաբանություն

Իրավապահ մարմինների կամայականության համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը

Համաթվի սահմանումը

Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը հանդիսանում է հասարակության զանգվածային տրամադրությունների միտումների ընդհանրացված համաթիվ, որն արտացոլում է ոստիկանության, դատախազության և դատական մարմինների կամայական՝ օրենքով չսահմանված գործողություններից, հասարակության անպաշտպանվածության զգացումները:

Համաթվի հաշվարկման համար օգտագործվող հարցերն ուղղված են բացահայտելու իրավապահ մարմինների գործունեության վերաբերյալ հասարակության գնահատականները:

Կամայականության համաթվի հաշվարկը կառուցվում է երեք բաղադրիչների (բաղկացուցիչների) հիման վրա.

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ»

Տվյալ համաթիվը կառուցվում է երեք հիմնական հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվերի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

Այդ հարցերն են. «Որքանո՞վ եք վստահում իրավապահ մարմիններին (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) (Ամբողջ համակարգին) (Բոլորը միասին)», «Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է Հայաստանի համար լուրջ խնդիր հանդիսանում իրավապահ մարմինների կողմից դրսևորվող կամայականությունը և ապօրինությունը» և «Ըստ Ձեզ՝ որքա՞ն հաճախ են ՀՀ իշխանություններն իրավապահ մարմիններին օգտագործում որպես ընդդիմության (սեփական քաղաքական հակառակորդների) դեմ ճնշման միջոց»:

«Անձնական մտահոգվածության համաթիվ»

Այս համաթիվը հաշվարկվում է «Հնարավո՞ր է արդյոք, որ Դուք կամ Ձեր մտերիմները տուժեք իրավապահ մարմինների կամայականություններից» և «Անձամբ Դուք որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգում իրավապահ մարմինների կամայականություններից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Անձնական պաշպանվածության համաթիվ»

Համաթիվը կառուցվում է «Եթե հանկարծ Դուք ոստիկանության կամայականության զոհ դառնաք, ապա, ըստ Ձեզ՝ արդյոք այլ իրավապահ մարմինները (դատարաններ և/կամ դատախազություն) Ձեզ կպաշտպանե՞ն» և «Ըստ Ձեզ՝ Հայաստանում հնարավո՞ր է արդյոք օրինական միջոցներով վերականգնել ոստիկանության կողմից խախտված իրավունքները» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

Ոստիկանության վստահության համաթվի հաշվարկման մեթոդաբանությունը

Համաթվի սահմանումը

Ոստիկանության վստահության համաթիվը հանդիսանում է հասարակության զանգվածային տրամադրությունների միտումների ընդհանրացված համաթիվ, որն արտացոլում է ոստիկանության հանդեպ վերաբերմունքի և վստահության, գործունեությունից գոհունակության, քաղաքացի-ոստիկան համագործակցության պատրաստակամության աստիճանի զգացումները:

Համաթվի հաշվարկման համար օգտագործվող հարցերն ուղղված են բացահայտելու ոստիկանության հանդեպ վերաբերմունքի, գործունեության և համագործակցության պատրաստակամության վերաբերյալ հասարակության դիրքորոշումները և գնահատականները:

Ոստիկանության հանդեպ վստահության համաթվի հաշվարկը կառուցվում է նույնպես երեք բաղադրիչների (բաղկացուցիչների) հիման վրա.

«Ոստիկանության գործունեության գնահատում»

Սույն համաթիվը կառուցվում է «Որքանո՞վ եք բավարարված Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության գործունեությունից» և «Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է արդյոք Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությունը պաշպանել Ձեզ/Ձեր ընտանիքին հանցագործներից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունք»

Այս համաթիվը հաշվարկվում է «Որքանո՞վ եք վստահում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությանը» և «Ինչպե՞ս եք վերաբերվում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության աշխատողներին» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամություն»

Համաթիվը կառուցվում է երեք հիմնական հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվերի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով. «Ըստ Ձեզ՝ արդյո՞ք քաղաքացիները պետք է օգնեն ոստիկանությանը», «Եթե Դուք ծեծի, կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք» և «Որոշ մարդիկ, հանդիսանալով հանցագործության ականատես/վկա, կանչում են ոստիկանությանը: Եթե Դուք ծեծի, կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք»:

Համաթվերի հաշվարկման բանաձևերը

Համաթվերը հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝

Index = a+0.5*b-0.5*c-d

որտեղ

«*Index*»-ը յուրաքանչյուր հարցի պատասխանների հիման վրա հաշվարկված գործակիցն է,

«a»-ն առավել «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունն է,

«b»-ն՝ «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«c»-ն՝ «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,

«d»-ն՝ առավել «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը:

Իսկ «Ինչպե՞ս եք վերաբերում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության աշխատողներին» հարցի պատասխանների հիման վրա ստացվող համաթիվը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝

Բանաձև՝ *Index* = a+b +0.5*c-0.5*d-e-f

որտեղ

«*Index»-ը* այս հարցի պատասխանների հիման վրա հաշվարկված գործակիցն է,
«a» և «b»-ն՝ առավել «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,
«c»-ն՝ «դրական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,
«d»-ն՝ «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը,
«e» և «f»-ը՝ առավել «բացասական» պատասխանների տոկոսային բաշխվածությունը:

Ըստ յուրաքանչյուր հարցի՝ համաթիվը հաշվարկվում է դրա ընդհանրացված արժեքը որպես «բացասական» և «դրական» պատասխանների մասնաբաժինների տարբերություն, ընդ որում՝ առավել «բացասական» կամ առավել «դրական» պատասխանները վերցվում են «1» կշռով, իսկ մասնակի «բացասական» կամ «դրական» պատասխանները՝ «0.5» կշռով:

Համաթիվը հաշվարկվում է որպես մի քանի մասնակի համաթվերի (երկու կամ երեք մասնակի համաթվի յուրաքանչյուր բաղադրիչի համար) ընդհանրացված արժեքների միջին թվաբանական: Այդպիսով՝ և՛ կամայականության/վստահության ընդհանրացված համաթվերը, և՛ դրա բաղադրիչները փոփոխվում են «-100»-ից մինչև «+100» միջակայքում: Ընդ որում՝ եթե համաթվերից որևէ մեկը մեծ է «0»-ից, ապա դա նշանակում է, որ գերակշռում են «դրական» գնահատականները, ինչը ցույց է տալիս նկարագրվող խնդրի բացակայությունը, իսկ «0»-ից ցածրի դեպքում՝ «բացասական» գնահատականները, ինչն էլ իր հերթին մատնանշում է նկարագրվող խնդրի առկայությունը:

2016թ. հարցումների իրականացման աշխարագրությունը



Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը

Սույն հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկվել է ՀՀ -ում «Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվը» (այսուհետ՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ»), որը կազմել է «**-6**» 2016թ.: Նշենք, որ «-6» համաթիվը, այս հետազոտության մեթոդաբանական սկզբունքներից ելնելով, հանդիսանում է բացասական համաթիվ (ցածր է «0»-ից), ինչը խոսում է իրավապահ մարմիններում կամայականության առկայության մասին: Համադրելով 2015թ-ին մեր կողմից իրականացված նույնանման հետազոտության արդյունքների հետ՝ տեսնում ենք, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» նվազել է «7» ցուցիչով: Հիշեցնենք, որ 2015թ.-ի

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» կազմել էր՝ «1» (տե՛ս Գծապատկեր 1):



«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» երեք բաղկացուցիչ համաթվերը («Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ», «Անձնական անպաշտպանվածության համաթիվ», «Անհատական մտահոգվածության համաթիվ»)[4] 2015թ. համեմատ 2016թ. նույնպես նվազել են: Այսպես՝ «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2015թ համեմատ 2016թ.-ին նվազել է «8»-ով (ընդհանուր ցուցիչը 2016թ. կազմել է «-30», իսկ 2015թ.՝ «-22») (տե՛ս Աղյուսակ 8): «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2015թ. համեմատ 2016թ.-ին նավազել է «12»-ով (2016թ կազմել է «-7», իսկ 2015թ.՝ «5»), իսկ «Անհատական մտահոգվածության համաթիվը»՝ «3»-ով (2016թ. կազմել է «17», իսկ 2015թ.՝ «20»):

Աղյուսակ 8 **«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» երեք բաղկացուցիչ համաթվերի փոփոխությունը 2015թ և 2016թ. ընթացքում**			
Համաթվեր (բաղկացուցիչներ)	2015թ. ցուցիչներ	2016թ. ցուցիչներ	2015-2016թթ. տարբերությունը
«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ»	-22	-30	-8

[4] Աղյուսակներում և գծապատկերներում այս համաթվերը ներկայացվում են որպես «Ընդհանուր համաթիվ»:

«Անձնական անպաշտպանվածության համաթիվ»	5	-7	-12
«Անհատական մտահոգվածության համաթիվ»	20	17	-3

Տվյալ համաթվերը հաշվարկվել են՝ ըստ մարզերի, բնակավայրերի տիպերի, սեռի, տարիքի և սոցիալ-ժողովրդագրական այլ տվյալների:

Դիտարկելով «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» (2016թ.) ըստ մարզերի՝ պարզ է դառնում, որ այն ամենացածրն է Երևան քաղաքում («-20»), Շիրակի և Արագածոտնի մարզերում («-7») և Լոռու մարզում («-6»), իսկ ամենադրականը՝ Վայոց Ձորի (19), Տավուշի (17) և Գեղարքունիքի (10) մարզերում (տե՛ս Գծապատկեր 2):



Համեմատելով 2015թ. և 2016թ. արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» ցուցիչներն ավելի շատ նվազել են Լոռու («23»-ով), Արմավիրի («18»-ով), Արարատի («12»-ով) և Շիրակի («10»-ով) մարզերում: Որոշ մարզերում նկատելի է տվյալ համաթվի ցուցիչների դրական աճ՝ Սյունիք («30-ով») և Տավուշ («8»-ով): Այս համաթվի ցուցիչների փոփոխությունների միտումները առավել մարամասն տե՛ս Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9 «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի			
Մարզեր	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Երևան	-20	-15	-5
Շիրակ	-7	3	-10
Արագածոտն	-7	-6	-1
Լոռի	-6	17	-23
Արմավիր	-5	13	-18
Արարատ	1	13	-12
Կոտայք	2	8	-6
Սյունիք	8	-22	30
Գեղարքունիք	10	19	-9
Տավուշ	17	9	8
Վայոց ձոր	19	25	-6

«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» մասնակի (բաղկացուցիչ) համաթվերից «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2016թ. բացասական է բոլոր մարզերում և Երևան քաղաքում (տե՛ս Գծապատկեր 3):



2016թ. այս համաթվի ամենաբարձր բացասական ցուցիչը Երևան քաղաքում է («-43»), Արագածոտնի («-33») և Շիրակի («-31») մարզերում, իսկ ամենացածր բացասականը՝ Տավուշի մարզում («-4»): Համեմատության համար նշենք, որ 2015թ ընդհանուր համաթվից ցածր է Երևան քաղաքում («-38»), Սյունիքի («-38»), Շիրակի («-24») և Արագածոտնի («-24») մարզերում:

2015թ և 2016թ. արդյունքները համեմատելով՝ նկատելի է, որ «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» գրեթե բոլոր մարզերում նվազել է: Ցուցիչներն ամենաշատը նվազել են Լոռու («21»-ով), Գեղարքունիքի («20»-ով), Վայոց Ձորի («14»-ով), Կոտայքի («13»-ով) և Արմավիրի («13»-ով) մարզերում: Որոշ մարզերում նկատելի է տվյալ համաթվի ցուցիչների դրական աճ (չնայած այն հանգամանքին, որ այնուամենայնիվ մնում են բացասական արժեքների տիրութում)՝ Սյունիքի և Տավուշի մարզերում աճել է «15»-ով: Նկատենք, որ այս համաթիվը թե 2016թ., թե 2015թ. բացասական է և Երևանում և բոլոր մարզերում: Ամբողջական պատկերը տես Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10
«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը»՝ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր	**2016թ.**	**2015թ.**	Համաթվերի տարբերությունը
Երևան	-43	-38	-5
Արագածոտն	-33	-24	-9
Շիրակ	-31	-24	-7
Արմավիր	-28	-15	-13
Սյունիք	-23	-38	15
Լոռի	-22	-1	-21
Կոտայք	-22	-9	-13
Գեղարքունիք	-21	-1	-20
Արարատ	-19	-15	-4
Վայոց ձոր	-17	-3	-14
Տավուշ	-4	-19	15

Հարկ ենք համարում նշել, որ «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2016թ. բացասական է 11 մարզերից 6-ում՝ Երևան քաղաքում («-20»), Արմավիրի («-11»), Շիրակի («-9»), Արագածոտնի («-9»), Լոռու («-8») և Արարատի («-1») մարզերում (տե՛ս Գծապատկեր 4): 2015թ. միայն Երևան քաղաքում, Արագածոտնի և Սյունիքի մարզերում այս համաթիվը բացասական է:

2016թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» համեմատելով 2015թ.



արդյունքների հետ՝ պարզ է դառնում, որ միայն Սյունիքի մարզում է, որ տեղի է ունեցել այս ցուցիչի աճ՝ այն աճել է «44»-ով: Մնացած բոլոր մարզերում տեղի ունի այս համաթվի ցուցիչի նվազում: Ամենաշատը այն նվազել է Արմավիրի («32»-ով), Լոռու («26»-ով), Արարատի («25»-ով) և Շիրակի («17»-ով) մարզերում:

2015թ. և 2016թ.-ին ըստ մարզերի հաշվարկված «Անձնական անպաշտպանվածության համաթվերի» փոփոխությունների վերաբերյալ առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 11-ում: Ինչպես երևում է աղյուսակից բացատրությամբ Սյունիքի մարզի, մյուս մարզերում և Երևան քաղաքում այս համաթվի ցուցիչը նվազել է, և առավել շատ՝ Արմավիրի («32»-ով), Լոռու («26»-ով), Արարատի («25»-ով) և Շիրակի («17»-ով) մարզերում:

Աղյուսակ 11 «Անձնական անպաշտպանվածության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի			
Մարզեր	**2016թ.**	**2015թ.**	Համաթվերի տարբերությունը
Երևան	-20	-13	-7

Արմավիր	-11	21	-32
Շիրակ	-9	8	-17
Արագածոտն	-9	-1	-8
Լոռի	-8	18	-26
Արարատ	-1	24	-25
Կոտայք	3	10	-7
Սյունիք	14	-30	44
Գեղարքունիք	16	23	-7
Տավուշ	17	19	-2
Վայոց ձոր	26	29	-3

2016թ. բոլոր մարզերում դրական է միայն «Անհատական մտահոգվածության համաթիվը» (տես Գծապատկեր 5): Ամենաբարձր դրականներն են՝ Վայոց Ձորի («47»), Տավուշի («39») և Գեղարքունիքի («35») մարզերում: Իսկ ամենացածր դրականը՝ Երևան քաղաքում («2»), Լոռու («11») և Շիրակի մարզերում («19»):



Համեմատելով **2015թ. և 2016թ. «Անհատական մտահոգվածության համաթվերը»՝** առավել ցայտուն նվազում է նկատվում Լոռու («22»-ով), Արմավիրի («11»-ով) և Արարատի («9»-ով) մարզերում: Այս համաթվի ցուցիչների դրական աճ է նկատվել՝ Սյունիքի («32»-ով), Արագածոտնի («14»-ով), և Տավուշի («12»-ով) մարզերում: Այս համաթվի երկու տարիների ցուցիչների փոփոխությունները, ըստ մարզերի, առավել մանրամասն տես Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12
«Անհատական մտահոգվածության համաթիվը»՝ ըստ մարզերի և տարեթվերի

Մարզեր	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Երևան	2	7	-5
Լոռի	11	33	-22
Շիրակ	19	25	-6
Արարատ	21	30	-9
Արագածոտն	21	7	14
Արմավիր	22	33	-11
Կոտայք	25	24	1
Սյունիք	33	1	32
Գեղարքունիք	35	35	0
Տավուշ	39	27	12
Վայոց ձոր	47	49	-2

Այսպիսով՝ 2015թ. համեմատ 2016թ-ին ներկայացված բոլոր համաթվերը («Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ», «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ», «Անձնական անպաշտպանվածության համաթիվ», «Անհատական մտահոգվածության համաթիվ») ակնհայտորեն նվազել են: Համաթվերն ավելի շատ նվազել են հիմնականում Լոռու, Արմավիրի և Արարատի մարզերում (այս մարզերի ցուցիչների նվազումները տատանվում են «-12»-ից մինչև «-32» սահմաններում): Դա վկայում է այն մասին, որ երկու տարիների ընթացքում այս մարզերի բնակիչների մոտ կարծիքն առավել կտրուկ է փոփոխվել (աճել են բացասական վերաբերմունքը և գնահատականները), տեղի է ունեցել ոստիկանության նկատմամբ վստահության մակարդակի նվազում, այդ կառույցների՝ որպես քաղաքական հետապնդման մեխանիզմի կիրառման աճ (ըստ հարցվածների), ոստիկանության կամայականության աճ (ըստ հարցվածների) և իրավապահ մարմինների կամայականություններից պաշտպանվելու մեխանիզմի բացակայության ընկալման աճ:

Դիտարկելով 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ բնակավայրերի տիպերի՝ պարզ է դառնում, որ այն բացասական է քաղաքային բնակավայրերում («-12») և դրական է գյուղական բնակավայրերում՝ («8») (տես Գծապատկեր 6):

Համեմատելով «Իրավապահ մարմինների կամայականության համաթվերը»՝ ըստ բնակավայրերի տիպերի՝ երկու տարիների (2015թ. - 2016թ.) կտրվածքով՝ նկատելի **է, որ այն քաղաքային բնակավայրերում** նվազել է «8»-ով (2016թ. այս համաթիվը կազմել է «-12», իսկ 2015թ.՝ «-4»), **իսկ գյուղական բնակավայրերում՝ «5»-ով** (2016թ. այս համաթիվը կազմել է «8», իսկ 2015թ.՝ «13»):



Բաղկացուցիչ համաթիվ հան-դիսացող «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2016թ. բացասական է և քաղաքային («-35»), և գյուղական («-15») բնակավայրերում (տես Գծապատկեր 7):



Համեմատելով 2016թ. տվյալ համաթիվը 2015թ. արդյունքների հետ՝ ակնհայտ է դառնում, որ «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» քաղաքային համայնքներում նվազել է «9»-ով, իսկ գյուղական համայնքներում՝ «5»-ով:

Քաղաքային բնակավայրերում 2016թ. բացասական է նաև մեկ այլ բաղկացուցիչ համաթիվ՝ **«Անձնական անպաշտպանվածության համաթիվը»** («-11») (տե՛ս Գծապատկեր 8):



2015թ. արդյունքների համեմատ 2016թ. **«Անձնական անպաշտպանվածության համաթիվը»** նվազել է «10»-ով (2015թ. այն կազմում էր «-1» և 2016թ.՝ «-11»): Չնայած այն հանգամանքին, որ գյուղական համայնքներում «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2016թ դրական է և կազմել է «6», սակայն 2015թ. համեմատ այն նույնպես նվազել է «12»-ով (2015թ. այն կազմում էր «18»):

2016թ. **«Անհատական մտահոգվածության համաթիվը»** դրական ցուցիչներ ունի և գյուղական և քաղաքային բնակավայրերում (քաղաքային բնակավայրեր՝ «11», գյուղական բնակավայրեր՝ «32») (տես Գծապատկեր 9):



Այս համաթիվը դրական արժեք ուներ նաև 2015թ.: Սակայն համեմատելով այս երկու տարիների արդյունքները՝ ակնհայտ երևում է, որ քաղաքային համայնքներում ցուցիչները նվազել են «5»-ով, իսկ գյուղական համայնքներում, ընդհակառակը, դրանք աճել են «2»-ով:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ քաղաքային բնակավայրերում համաթվերն ավելի շատ բացասական փոփոխության միտում ունեն, քան գյուղական բնակավայրերում (2015թ. համեմատ 2016թ. ցուցիչների նվազումները տատանվում են «-5»-ից մինչև «-12» սահմաններում), ինչը կրկնում է նախորդ տարվա պատկերը: Դրա հավանական պատճառներից կարող է հանդիսանալ այն, որ քաղաքային բնակավայրերում բնակչությունն առավել հաճախ է առնչություն ունենում իրավապահ մարմինների հետ և ավելի ակտիվ է սոցիալ-տնտեսական և քաղաքացիական գործընթացներում, քան գյուղական բնակավայրերի բնակչությունը:

Դիտարկելով **«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝** ըստ սեռի՝ երևում է, որ բացասական պատասխաններն առավել գերակշռում են արական սեռի ներկայացուցիչների մոտ (Գծապատկեր 10.):



Այսպես օրինակ՝ 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» արական սեռի ներկայացուցիչների գնահատմամբ կազմում է «-11», իսկ ըստ իգական սեռի ներկայացուցիչների՝ «-4»: Համեմատելով 2015թ. տվյալների հետ, տեսնում ենք, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» արական սեռի ներկայացուցիչների գնահատմամբ նվազել է «9»-ով (2015թ. կազմում էր «-2»), իսկ ըստ իգական սեռի ներկայացուցիչների՝ «6»-ով (2015թ. կազմում էր «2»):

2016թ. բաղկացուցիչ համաթվերից **«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» և՛ կանանց, և՛ տղամարդկանց մոտ ունի բացասական արժեքներ՝** համապատասխանաբար՝«-27» և «-34» (տե՛ս Գծապատկեր 11.):



2015թ. արդյունքների համեմատությամբ այս համաթվի պարագայում էլ առկա է ցուցիչների նվազում երկու սեռերի ներկայացուցիչների մոտ՝ արական սեռի մոտ՝ «6»-ով (2015թ. այն կազմում էր «-28») և իգական սեռի մոտ՝ «7»-ով (2015թ. այն կազմում էր «-20»):

2016թ. **«Անձնական անպաշտպանվածության համաթիվը»** կանանց մոտ կազմել է՝ «-4», իսկ տղամարդկանց մոտ՝ «-11» (տե՛ս Գծապատկեր 12.):



Համեմատելով 2016թ. -ի արդյունքները 2015թ.-ի հետ, ակնհայտ է դառնում, որ այս համաթվի ցուցիչները նույնպես կտրուկ նվազել են ըստ երկու սեռերի ներկայացուցիչների: Այսպես՝ արական սեռի ներկայացուցիների գնահատմամբ՝

այն նվազել է «13»-ով (2015թ. այն կազմում էր «2»), իսկ ըստ իգական սեռի ներկայացուցիչների՝ «10»-ով (2015թ. այն կազմում էր՝ «6»):

Երկու սեռային խմբերի ներկայացուցիչների գնահատմամբ դրական է միայն 2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը», ըստ իգական սեռի ներկայացուցիչների գնահատման այն կազմել է «19», իսկ ըստ արական սեռի ներկայացուցիրների՝«13» (Գծապատկեր 13.):



Համեմատելով 2016թ. տվյալները 2015թ. հետ՝ տեսնում ենք, որ այս համաթվի ցուցիչները նույնպես նվազել են երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ՝ ըստ արական սեռի ներկայացուցիչների՝ «7»-ով, ըստ իգական սեռի ներկայացուցիչների՝ «1»-ով: Նշենք, որ 2015թ. այս համաթվի ցուցիչները երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ կազմում էին «20»:

Համեմատելով 2015թ. հետազոտության արդյունքները 2016թ. հետ՝ ակնհայտ է դառնում, որ 2016թ. առավել կտրուկ նվազել են համաթվերի ցուցիչները. արական սեռի ներկայացուցիչների գնահատմամբ՝ ցուցիչների նվազումը տատանվում է «-6»-ից մինչև «-13» սահմաններում:

Համաթվերն ըստ սեռերի[5] դիտարկելիս կարևոր ենք համարում հաշվի առնել այն հիպոթեզը, որ արական սեռի ներկայացուցիչներն ավելի հաճախ են առնչվում իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ, քան՝ իգական սեռի ներկայացուցիչները, ուստի՝ տղամարդկանց պատասխանները և դատողություններն ավելի շուտ հիմնված են սեփական փորձի կամ դիտարկումների վրա:

[5] Հարցմանը մասնակցել են 66.3% իգական և 33.8% արական սեռի ներկայացուցիչներ(2016թ.):

Հետազոտության արդյունքների խաչաձև վերլուծությունը ցույց է տալիս, որ իրավապահ մարմինների գործունեության գնահատականների վրա ազդեցություն ունի ինչպես բնակավայրի տիպը, այնպես էլ սեռը: Երկու դեպքում էլ դա պայմանավորված է այդ մարմինների հետ այս կամ այն կերպ անմիջական առնչության փաստով:

Տարիքի գործոնը նույնպես իր ազդեցությունն ունի «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» մակարդակի վրա (Գծապատկեր 14.):



2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» դրական է միայն «26-35 տարիքային» խմբի ներկայացուցիչների գնահատմամբ «1», մնացած տարիքային խմբերում այն ունի բացասական ցուցիչներ: Այս համաթվի առավել բացասական ցուցիչը առկա է «36-45 տարեկան» տարիքային խմբում՝ «-10», իսկ ամենացածրը «18-25» տարիքային խմբում՝ «-5»: 2015թ. արդյունքների համեմատ՝ 2016թ. բոլոր տարիքային խմբերում այս համաթվի ցուցիչները նվազել են: Ամենաշատը այն նվազել է «36 – 45 տարեկան» տարիքային խմբում՝ «14»-ով (2015թ. այն կազմում էր «4»), «18 -25 տարեկան» և «45 – 60 տարեկան» տարիքային խմբերում՝ երկուսում էլ «10»-ով (2015թ. այն առաջինի մոտ կազմում էր «5», իսկ երկրորդի մոտ՝ «0»):

2016թ. «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» բոլոր տարիքային խմբերի գնահատմամբ ունի միայն բացասական արժեքներ (Գծապատկեր 15.):



Այս համաթիվը առավել բացասական է «36-45 տարեկան» և «61 և ավելի» տարիքային խմբերում՝ «-32» յուրաքանչյուր խմբում, իսկ ամենացածր բացասականը «18-25 տարեկան» տարիքային խմբում՝ «-25»: Այս համաթվի բոլոր ցուցիչները 2015թ. -ի համեմատ նույնպես նվազել են: Ամենաշատը նվազել են «36 – 45 տարեկան» («14»-ով), «18 -25 տարեկան» և «45 – 60 տարեկան» («10»-ով) տարիքային խմբերի մոտ:

Բոլոր տարիքային խմբերի մոտ 2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը» դրական է (տ՝ես Գծապատկեր 16.):



Այն ամենաբարձրն է «61 և ավելի» տարիքային խմբի մոտ՝ «24», իսկ ամենացածրը «36-45» տարիքային խմբի մոտ՝ «8»: Համեմատելով 2015թ. արդյունքների հետ՝ 2016թ. այս համաթվի ցուցիչը ամենաշատը նվազել է «36 – 45 տարեկան» տարիքային խմբու՝ «-14»-ով (2015թ. այն կազմում էր՝ «21»), «18 -25 տարեկան» (այն նվազել է «5»-ով) և «45 - 60 տարեկան» (այն նվազել է «3»-ով) տարիքային խմբերում: Իսկ ցուցիչի դրական աճ է նկատվում միայն «61 և ավելի տարեկան» տարիքային խմբում՝ «2»-ով:

2016թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» գրեթե բոլոր տարիքային խմբերում ունի բացասական արժեք՝ բացառությամբ «26-35 տարեկան» տարիքային խմբի «9» (տ՝ես Գծապատկեր 17.):



Այս համաթվի ցուցիչները առավել բացասական են «61 և ավելի» («-16») և «45-60» («-12») տարիքային խմբերում: Նշենք նաև, որ համեմատելով այս համաթվի ցուցիչները 2015թ և 2016թ. կտրվածքով՝ գրեթե բոլոր տարիքային խմբերում նկատվել է նրանց բացասական աճ, առավել մեծ չափով «36 – 45 տարեկան» («19»-ով) և «18 -25 տարեկան» («17»-ով) տարիքային խմբերում: Այս համաթվի ցուցչի դրական աճ միայն տեղի է ունեցել «26-36» տարիքային խմբում՝ «1»-ով:

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» և նրա գրեթե բոլոր բաղկացուցիչ համաթվերը 2016թ. նվազել են 2015թ. համեմատ: Բացառություն է կազմում միայն «Անհատական մտահոգվածության համաթիվը»: Այն «61 և ավելի» տարիքային խմբի մոտ դրականորեն աճել է 1-ով և դարձել է՝ «24»: Իսկ «26-35» տարիքային խմբի ներկայացուցիչների մոտ պահպանել է նույն դրական ցուցանիշը՝ «20»:

Ըստ հարցվածների կրթության՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» ներկայացված է Գծապատկեր 18-ում:



Այսպես՝ 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» «ետբուհական (գիտ. աստիճան)» կրթություն ունեցող հարցվողների գնահատմամբ «-27» է, «բարձրագույն կրթություն» ունեցողների մոտ՝ «-10», «թերի բարձրագույն» ունեցողների գնահատմամբ՝ «-19» և «միջին մասնագիտական»՝ «-10»: Այս համաթիվը դրական ցուցանիշ ունի «թերի միջնակարգ» («18»), «տարրական կրթություն» («11») և «միջնակարգ» («3») կրթություն ունեցող հարցվողների գնահատմամբ: 2016թ.-ին՝ 2015թ.-ի համեմատ դրական միտում է նկատվում «ետբուհական (գիտ. աստիճան)» կրթություն ունեցող հարցվողների գնահատմամբ, որտեղ այս համաթվի բացասական ցուցիչը նվազել է «19»-ով (2015թ՝ «-45») և «թերի միջնակարգ (8-ամյա)» կրթություն ունեցող հարցվողների գնահատմամբ՝ «1»-ով (2015թ.՝ «17»): Մնացած կրթական խմբերում տեղի է ունեցել ցուցիչների նվազում և ամենաշատը նվազել է «16»-ով՝ «տարրական» (2015թ.՝ «27»), «11»-ով «միջին մասնագիտական» (2015թ.՝ «1») և «9»-ով «բարձրագույն կրթություն» (2015թ.՝ «-10») ունեցող հարցվածների գնահատմամբ:

2016թ.-ի տվյալներով՝ բոլոր կրթական խմբերում «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվն» ունի բացասական ցուցանիշ (տ՝ես Գծապատկեր 19.):



Այն ամենացածրն է «ետբուհական (գիտ. աստճան)» («-50»), «բարձրագույն» («-45») և «թերի բարձրագույն» («-43») կրթություն ունեցող հարցվողների գնահատմամբ: Նվազագույն ցածր ցուցանիշը՝ «-4», թերի միջնակարգ (8-ամյա) կրթություն ունեցող հարցվածների պատասխանների հիման վրա է ստացվել: 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին տեղի են ունեցել այս համաթվի ցուցիչների էական փոփոխություններ: Ցուցիչի բացասական աճ տեղի է ունեցել միայն «ետբուհական (գիտական աստիճան)» կրթական խմբում՝ այն աճել է «21»-ով (2015թ. «-71»-ը 2016թ. դարձել է «-50»): Ամենաշատը այն նվազել է «տարրական»՝ «39»-ով (2015թ՝ «3») և «թերի բարձրագույն»՝ «13»-ով (2015թ.՝ «-30») կրթություն ունեցողների խմբերում:

2016թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» ամենաբարձր բացասականը «ետբուհական (գիտ. աստճան)» և «տարրական» (յուրաքանչյուրի մոտ «-30») կրթություն ունեցողների խմբերում է (Գծապատկեր 20.):



Համեմատելով 2015թ. հետազոտության արդյունքների հետ՝ այս համաթվի ցուցիչներից միայն «ետբուհական (գիտական աստիճան)» ունեցողների գնահատմամբ է տեղի ունեցել դրական միտում՝ բացասական ցուցիչը նվազել է «17»-ով (2015թ.՝ «-47»): Իսկ մնացած խմբերում տեղի է ունեցել ցուցիչների բացասական աճ:

2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը» դրական է բոլոր կրթական խմբերում (Գծապատկեր 21.):



2015թ. հետազոտության արդյունքների համեմատ այս համաթվի ցուցիչներն աճել են՝ «տարրական»՝ (2015թ.՝ «58») «42»-ով, «ետբուհական (գիտական աստիճան)» (2015թ.՝ «-19»)՝ «19»-ով, և «թերի միջնակարգ (8-ամյա)» (2015թ.՝ «39»)՝ «11»-ով, խմբերում: Մնացած կրթական խմբերում տեղի է ունեցել դրական ցուցիչների նվազում:

Գծապատկերներ 18-21-ում ներկայացված արդյունքները վկայում են այն մասին, որ իրավապահ մարմինների գործունեությունը գնահատող համաթվերի վրա մեծ ազդեցություն ունի նաև հարցվողի կրթության մակարդակը: Հարցվողների կրթության մակարդակի բարձրացմանը զուգահեռ աճում են բացասական համաթվերը, ինչը կրկնում է 2015թ. հետազոտության արդյունքների հիման վրա ստացած օրինաչափությունը:

2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը», ըստ հարցվածների տնտեսական դրության դիտարկելիս, պարզ է դառնում, որ այս համաթիվը դրական արժեք ունի միայն «գումարը բավարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» պատասխանը նշողների խմբում՝«6» (տե՛ս Գծապատկեր 22.):



Այս համաթվի առավելագույն բացասական արժեքը դրսևորվել է այն հարցվողների պատասխաններում, ովքեր իրենց տնտեսական դրությունը բնութագրել են որպես «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» («-12»), իսկ նվազագույնը՝ «գումարը բավարում է սնունդ և հագուստ գնելու համար» («-2»): Այս համաթվի 2016թ. արդյունքները համեմատելով 2015թ. հետ՝ պարզ է դառնում, որ բոլոր ցուցիչների նվազում է տեղի ունեցել: Ամենաշատը նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» ՝ «13»-ով (2015թ.՝ «1»), և «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար»՝ «10»-ով, (2015թ.՝ «-2») տարբերակները նշողների խմբերում:

2016թ. «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» բացասական է ըստ իրենց տնտեսական դրության ինքնագնահատականի բաշխված բոլոր խմբերում (տե՛ս Գծապատկեր 23.):



Համեմատելով 2015թ. արդյունքների հետ՝ 2016թ. այս համաթվի բոլոր ցուցիչներում տեղի է ունեցել ցուցանիշների բացասական աճ: Առավել կտրուկ այս ցուցիչի նվազումը տեղի է ունեցել «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» իրենց տնտեսական դրությունը բնութագրողների գնահատմամբ՝ «-12»-ով (2015թ.՝ «-23», իսկ 2016թ.՝ «-35»):

2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը» բոլոր խմբերում դրական է և արժեքը տատանվում է՝ «13-26» սահմանում (տես Գծապատկեր 24.):



Ամենաբարձր արժեք ունի այն «գումարը բավարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» նշողների գնահատմամբ («26»), իսկ ամենացածրը՝ «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» նշողների գնահատմամբ («13»):

2015թ.-ի համեմատ 2016թ.-ին տեղի է ունեցել այս համաթվի ցուցիչների նվազել են գրեթե բոլոր խմբերում՝ բացառությամբ «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» տարբերակը նշողների, որտեղ այն աճել է «2»-ով (2015թ.՝ «24»):

2016թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» դրական է միայն «գումարը բավարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» ՝ («12») և «գումարը բավարում է սնունդ և հագուստ գնելու համար» («3») նշողների խմբերում (տե՛ս Գծապատկեր 25.):



Այս համաթվի բոլոր ցուցիչները 2015թ.-ի արդյունքների համեմատ 2016թ-ին նվազել են: Այսպես՝ «գումարը բավարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» (2015թ.՝ «13») նշողների խմբում այն նվազել է «2»-ով, «գումարը բավարում է սնունդ և հագուստ գնելու համար» (2015թ.՝ «10») նշողների խմբում՝ «7»-ով: Իսկ ամենաշատը նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար»՝ «17»-ով և «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» («15»-ով) նշողների խմբերում:

Գծապատկերներ 22-25-ը մատնանշում են իրավապահ մարմինների կամայականության համաթվի, ինչպես նաև դրա բաղկացուցիչ հանդիսացող համաթվերի և հարցվողների տնտեսական դրության միջև առկա տրամաբանական կապը: Բացասական կամ առավել ցածր դրական գնահատում են «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» պատասխանը նշողների՝ այսինքն իրենց սոցիալապես անապահով համարողների խմբի կողմից:

Գծապատկեր 26-ում ներկայացված է «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը»՝ ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի չափի:



Ինչպես տեսնում ենք, այս համաթիվը 2016թ. բացասական է բոլոր խմբերում՝ անկախ ընտանիքի միջին ամսական եկամտի չափից: Նվազագույն բացասական է համաթիվը 350001 դրամից ավելի («-3») ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ: Իսկ առավել բարձր բացասական արժեք ունեն՝ 35001-ից մինչև 65000 դրամ և 150001-ից 350000 դրամ ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ (յուրաքանչյուրում կազմել է «-7»):

2016թ. «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» նույնպես բոլոր ենթախմբերում ունի բացասական արժեք (տե՛ս Գծապատկեր 27.):



Նվազագույն բացասականը՝ 35001-ից մինչև 65000 դրամ ընտանիքի ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ «-23» է: Համաթվի առավելագույն բացասական արժեքը ստացվել է «150001-ից մինչև 350000 դրամ» ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ՝ «-33»: 2015թ.-ի համեմատ այս համաթվի ցուցիչները 2016թ. գրեթե բոլոր խմբերում ունեն նվազման միտում, բացառությամբ՝ «350001 դրամից ավելի» եկամուտ ունեցող հարցվածների խմբի, որոնց մոտ նկատվում է ցուցչի աճ՝ բացասական արժեքը աճել է «6»-ով (2015թ.՝ «-36», 2016թ.՝ «-30»):

2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը» բոլոր խմբերում ունի դրական արժեք (Գծապատկեր 28.)**:**



Այն նվազագույն դրական է 150001-ից մինչև 350000 ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ («13»): Առավել բարձր է՝ 350001 դրամից ավելին ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցող հարցվողների գնահատմամբ («21»):

Հետաքրքրական է այն, որ **2016թ. «Անձնական անպաշտպանվածության համաթիվը»** ամենացածրն է այն հարցվածների մոտ, որոնց ընտանիքի միջին ամսական եկամուտը կազմում է մինչև 35000 դրամ («-13»), և ամենաբարձրն է այն հարցվածների գնահատմամբ, որոնց ընտանիքի միջին եկամուտը կազմում է «150000-ից մինչև 350000 դրամ(«-1») (Գծապատկեր 29.):



Իրականացված հետազոտության արդյունքի հիման վրա կարելի է եզրակացնել, որ կա որոշակի կախվածություն «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի», ինչպես նաև դրա բաղկացուցիչ համաթվերի և հարցվողների սոցիալ-տնտեսական խավին պատկանելության միջև (տե՛ս Գծապատկեր 30): Ըստ 2016թ.-ի տվյալների՝ համաթվերը նվազում են հարցվողի սոցիալական կարգավիճակի նվազմանը զուգահեռ:



Ինչպես երևում է Գծապատկեր 30-ից՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն» ամենացածրն է չքավոր խավի ներկայացուցիչների գնահատմամբ՝ «-23», իսկ ամենաբարձրն է (դրական արժեք) վերին խավի ներկայացուցիչների գնահատմամբ՝ «6»: Ավելին՝ 2015թ. հետազոտության արդյունքները համեմատելով 2016թ. հետ՝ ակնհայտ է դառնում, որ այս համաթվի ցուցիչը դրական աճ ունի միայն վերին խավի («27»-ով, 2015թ.՝ «-21», իսկ 2016թ.՝ «6») և միջին խավի վերին հատվածի («3»-ով, 2015թ.՝ «2», իսկ 2016թ.՝ «5») ներկայացուցիչների գնահատմամբ:

2016թ. «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» բոլոր խավերում ունի բացասական արժեքներ (տես Գծապատկեր 31):



Այն ամենացածրն է չքավոր և միջին խավի ստորին հատվածի ներկայացուցիչների գնահատմամբ («-40»), և ամենաբարձրն է միջին խավի վերին հատվածի («-19») և վերին խավերի («-19») խմբերում: Այս համաթվի ցուցիչների վերաբերյալ ստացված օրինաչափությունը և միտումները գրեթե կրկնում են նախորդ տարվա ուսումնասիրության արդյունքները:

2016թ. **«Անձնական անպաշտպանվածության համաթիվն»** ունի բացասական արժեք չքավոր խավի («-31»), միջինից ցածր խավի և միջին խավի ստորին հատվածում (յուրաքանչյուրում «-16»), միջին խավի միջին հատվածում («-4»), իսկ դրական արժեք ունի վերին խավի («6») և միջին խավի վերին հատվածի («5») ենթախմբերում (տե՛ս Գծապատկեր 32):



Համեմատելով 2015թ. արդյունքների հետ՝ 2016թ. այս համաթվի ցուցիչները գրեթե բոլոր խավի ներկայացուցիչների մոտ նվազել են բացառությամբ «վերին խավի» (աճել է «12»-ով) (2015թ.՝ «-11») և «միջին խավի վերին հատված» (աճել է «4»-ով) (2015թ.՝ «4») ենթախմբերում: Այս պատկերը կրկնում է գծապատկերներ 30 և 31-ում ներկայացված համաթվերի տրամաբանությունը:

2016թ. «Անհատական մտահոգվածության համաթիվը» բոլոր խմբերում ունի դրական արժեքներ, սակայն ամենացածրն է (ցածր դրական) չքավոր խավի («3») ներկայացուցիչների գնահատմամբ (տե՛ս Գծապատկեր 33): Այն ամենաբարձրն է վերին խավի ներակայացուցիչների գնահատմամբ («41»):



Համեմատելով 2016թ. արդյունքները 2015թ. հետազոտության արդյունքների հետ (տե՛ս Գծապատկեր 30-33)՝ նկատելի է համաթվերի նվազման միտում գրեթե բոլոր խավերում (աճել են բացական միտումները**):**

Այսպես՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» 2015թ. արդյունքների համեմատ ամենաշատը նվազել է չքավոր (նվազել է «16»-ով), միջին խավի ստորին հատված (նվազել է «12»-ով), միջին խավի միջին հատված (նվազել է «9»-ով) և միջինից ցածր խավ (նվազել է «8»-ով) ենթախմբերում: Դրան հակառակ՝ դրան՝ այն դարձել է դրական կամ բարձրացել է դրական ցուցանիշը՝ վերին խավ (աճել է «27»-ով) և միջին խավի վերին հատված (աճել է 3-ով) ենթախմբերում:

«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» հաշվարկի հիմքում ընկած ուսումնասիրության արդյունքները կարելի է գտնել Հավելված 1-ում (2016թ.) և Հավելված 2-ում (2015թ.):

Ոստիկանության վստահության համաթիվ



Իրականացված հետազոտության արդյունքների հիման վրա հաշվարկվել է **2016թ-ի ՀՀ-ում «Ոստիկանության վստահության համաթիվը», որը կազմել է «33»: Նշենք, որ 2015թ-ն այն կազմում էր «42»: Այսպիսով՝ այս համաթիվը 2016թ. նվազել է «6»-ով** (Գծապատկեր 34)**:**

2016թ.-ին, 2015թ համեմատ, «Ոստիկանության վստահության համաթիվի» բաղադրիչ համաթվերը («Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ», «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվ», «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվ») նույնպես նվազել են: 2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» 2015թ. հետազոտության արդյունքների համեմատ նվազել է «5»-ով (2015թ.՝ «36», 2016թ.՝ «31»), «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նվազել է «22»-ով (2015թ.՝ «49», 2016թ.՝ «27»), և «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» նվազել է «1»-ով (2015թ.՝ «42», 2016թ.՝ «41») (Տես Աղյուսակ 13.):

Աղյուսակ 13 «Ոստիկանության վստահության համաթիվի» երեք բաղկացուցիչ համաթվերի փոփոխությունը 2015թ և 2016թ. ընթացքում			
Համաթվեր (բաղկացուցիչներ)	2015թ. ցուցիչներ	2016թ. ցուցիչներ	2015-2016թթ. տարբերությունը
«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվ»	36	31	-5
«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվ»	49	27	-22
«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվ»	42	41	-1

Դիտարկենք այս համաթիվը և նրա հիմքում ընկած բաղկացուցիչ համաթվերը՝ ըստ մարզերի, բնակավայրերի տիպերի, սեռի, տարիքի և այլ սոցիալ-ժողովրդագրական տվյալների:

Գծապատկեր 35-ում պատկերված է 2015-2016թթ. **«Ոստիկանության վստահության համաթիվը»՝** ըստ մարզերի:



Ինչպես երևում է Գծապատկեր 35-ից՝ բոլոր համաթվերն ունեն դրական արժեք: 2016թ. Երևան քաղաքում այդ համաթիվն ամենացածրն է՝ «22»: 2016թ. այն ամենաբարձրն է Տավուշի («57») և Վայոց Ձորի («52») մարզերում:

2015 և 2016 թթ. համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս համաթիվը նվազել է 8 մարզերում, զգալի չափով աճել է միայն Սյունիքի («20»-ով) (2015թ.՝ «21») մարզում: Արագածոտնի մարզում ցուցանիշը մնացել է նույնը: Առավել շատ նվազել է Լոռու («18»-ով), Արարատի («12»-ով), Գեղարքունիքի («11»-ով) և Շիրակի («10»-ով) մարզերում: Ամբողջական պատկերը տես Աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14
«Ոստիկանության վստահության համաթիվը»
ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Երևան	22	31	-9
Շիրակ	28	38	-10
Լոռի	31	49	-18
Կոտայք	32	41	-9
Արագածոտն	32	32	0

Արարատ	36	48	-12
Արմավիր	39	46	-7
Գեղարքունիք	40	51	-11
Սյունիք	41	21	20
Վայոց ձոր	52	58	-6
Տավուշ	57	56	1

2016թ. **«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը»** նույնպես ամենացածրն է Երևան քաղաքում՝ «21», այնուհետև Լոռու մարզում «28», Շիրակի, Արարատի և Արագածոտնի մարզերում՝ «32» (տե՛ս Գծապատկեր 36):



Այս համաթիվը ամենաբարձրն է Վայոց Ձորի մարզում՝ «55»: 2015-2016թթ. տվյալների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այս համաթիվն ավելի շատ նվազել է Լոռու («23»-ով), Արարատի («18»-ով), Գեղարքունիքի («13»-ով) և Արմավիրի («12»-ով) մարզերում: Ցուցիչների զգալի դրական աճ գրանցվել է միայն Սյունիքի («37»-ով) մարզում:

2015 և 2016թթ.-ին ըստ մարզերի հաշվարկված «Ոստիկանության գործունեության գնահատման համաթվի» փոփոխությունների վերաբերյալ առավել մանրամասն տես Աղյուսակ 15-ում:

Աղյուսակ 15
«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Երևան	21	21	0
Լոռի	28	51	-23
Շիրակ	32	36	-4
Արարատ	32	50	-18
Արագածոտն	32	38	-5
Գեղարքունիք	37	50	-13
Կոտայք	38	38	0
Արմավիր	40	52	-12
Սյունիք	40	3	37
Տավուշ	50	49	1
Վայոց ձոր	55	63	-8

Ինչպես տեսնում ենք Աղյուսակ 15-ից, «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» նվազել է 7 մարզերում:

2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նույնպես առավել ցածրն է Երևան քաղաքում՝ «10», Շիրակի մարզում՝ «23» և Կոտայքի մարզում՝ «27», իսկ ամենաբարձր դրական ցուցանիշը Վայոց Ձորի մարզում է՝ «67» (տե՛ս Գծապատկեր 37):



2015թ.-ի համեմատ այս համաթվի ցուցիչները 2016թ.-ին նվազել է 9 մարզերում, բացառությամբ Տավուշի (դրական ցուցիչի աճ՝ «17»-ով) և Սյունիքի (դրական ցուցիչի աճ՝ «16»-ով) մարզերի: Ամենաշատը նվազել է Լոռու («25»-ով), Գեղարքունիքի («24»-ով), Շիրակի («22»-ով) մազերում և Երևան («19»-ով) քաղաքում: Տվյալ համաթվի երկու տարիների ցուցիչների՝ ըստ մարզերի փոփոխությունները առավել մանարամասն տես Աղյուսակ 16-ում:

Աղյուսակ 16
«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» ըստ մարզերի և տարեթվերի

Մարզ	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Երևան	10	29	-19
Շիրակ	23	45	-22
Կոտայք	27	39	-12
Արագածոտն	30	35	-5
Գեղարքունիք	32	56	-24
Լոռի	33	58	-25
Արարատ	34	51	-17
Արմավիր	39	49	-10
Սյունիք	42	26	16
Վայոց ձոր	59	67	-8
Տավուշ	75	58	17

2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» բոլոր մազերում նունպես ունի դրական արժեքներ: Այն համեմատաբար ցածր է Շիրակի՝ «28», Լոռու՝ «32» և Կոտայքի՝ «32», մարզերում և ամենաբարձրը Գեղարքունքի մարզում է՝ «52» (տե՛ս Գծապատկեր 38):



2015թ. տվյալների համեմատ, 2016թ. այս համաթվի արժեքները որոշ մարզերում նույնպես նվազել են (8 մարզերում): Ցուցիչների դրական միտում է տեղի ունեցել միայն Արագածոտնի («11»-ով), Սյունիքի («9»-ով) և Գեղարքունիքի («6»-ով) մարզերում: Ամենաշատը նվազել է Կոտայքում («15»-ով), Տավուշում («12»-ով) և Երևանում («10»-ով): Այս համաթվի ցուցիչների փոփոխությունների միտումները առավել մարամասն տես Աղյուսակ 17-ում:

Աղյուսակ 17 «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» ըստ մարզերի և տարեթվերի			
Մարզ	2016թ.	2015թ.	Համաթվերի տարբերությունը
Շիրակ	28	34	-6
Լոռի	32	39	-7
Կոտայք	32	47	-15

Երևան	34	44	-10
Արագածոտն	35	24	11
Արմավիր	37	39	-2
Արարատ	42	44	-2
Սյունիք	42	33	9
Վայոց ձոր	42	44	-2
Տավուշ	47	59	-12
Գեղարքունիք	52	46	6

2016թ. «Ոստիկանության հանդեպ վստահության համաթիվը» դիտարկելով ըստ բնակավայրերի տիպերի՝ կարող ենք նշել, որ բոլոր տիպի բնակավայրերում այն ունի դրական ցուցանիշ (տե՛ս Գծապատկեր 39): Միևնույն ժամանակ քաղաքային բնակավայրերում այն կրկնակի ցածր է («25») գյուղական բնակավայրերի արժեքից («46»):



Գծապատկեր 39-ից երևում է, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» 2016թ. նվազել է նախորդ տարվա համեմատ:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ գրեթե բոլոր համաթվերի ցուցիչները քաղաքային բնակավայրերում ավելի ցածր են, քան գյուղական բնակավայրերում:

2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» քաղաքային բնակավայրերում ավելի ցածր է («34»), քան գյուղական բնակավայրերում («42») (տե՛ս Գծապատկեր 40):



Համեմատելով 2015թ. հետազոտության տվյալների հետ՝ այս համաթվի ցուցիչը 2016թ. նվազել է քաղաքային համայնքներում «8»-ով, իսկ գյուղական համայնքներում, ընդհակառակը, աճել է «2»-ով:

Հետաքրքրական է նաև 2016թ. **«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթվի»** տարբերությունը քաղաքային և գյուղական համայնքների միջև: Այսպես, քաղաքային բնակավայրերում այն կազմել է «17», իսկ գյուղական բնակավայրերում «52» (տե՛ս Գծապատկեր 41):



Հավանական պատճառներից կարող են հանդիսանալ ենթամշակութային տարբերությունները, ոստիկանության հետ առնչության փորձի պակասը: 2016թ.-ին նկատվում է այս համաթվի ցուցիչների նվազում թե գյուղական, թե քաղաքային բնակավայրերում: Միաժամանակ արձանագրենք, որ ցուցիչն ամենաշատն է նվազել քաղաքային բնակավայրերում՝ «19»-ով (2015թ.՝ «36»):

Գծապատկեր 42-ում ներկայացված է 2015-2016թթ. **«Ոստիկանության վստահության համաթիվը»** ըստ սեռի:



Ինչպես տեսնում ենք, 2016թ. «Ոստիկանության վստահության համաթիվը» արական սեռի ներկայացուցիչների կողմից գնահատվել է «25» արժեք, իսկ իգական սեռի ներկայացուցիչների կողմից՝ «35»: Համեմատելով 2016թ. և 2015թ. հետազոտություններում «Ոստիկանության վստահության համաթվերը» ըստ սեռի՝ նկատելի է, որ երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ համաթվի նվազում է: Սակայն առավել մեծ նվազում է նկատվում արական սեռի ներկայացուցիչների մոտ (այն նվազել է «12»-ով)[6]:



Նշենք, որ բոլոր համաթվերը

[6] իգական սեռի ներկայացուցիչների մոտ նվազել է «-6»

երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ ունեն դրական արժեք, սակայն իգական սեռի ներկայացուցիչների մոտ բոլոր համաթվերը ավելի բարձր (դրական) արժեք ունեն, քան արական սեռի ներկայացուցիչների մոտ: Առավել ցայտուն տարբերությունը առկա է «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթվի» պարագայում. ցուցանիշները տարբերվում են «20» միավորով՝ իգական սեռի ներկայացուցիչների մոտ՝ «43», իսկ արական սեռի ներկայացուցիչների մոտ՝ «23» (Գծապատկեր 42)**:** Այս համաթիվը նվազել է երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ, սակայն արական սեռի ներկայացուցիչների մոտ այն ավելի շատ է նվազել՝ «13»-ով: Նշենք, որ իգական սեռի ներկայացուցիչների գնահատմամբ այն նվազել է «1»-ով:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» 2015թ. համեմատ 2016թ.-ին հավասարաչափ է նվազել («15»-ով) երկու սեռերի ներկայացուցիչների գնահատմամբ (տե՛ս Գծապատկեր 44):



2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» արական սեռի ներկայացուցիչների գնահատմամբ կազմել է «24», իսկ ըստ իգական սեռի ներկայացուցիչների՝ «28»:

Գրեթե նույն պատկերն ենք տեսնում «Ոստիկանության վստահության համաթիվը» ըստ տարբեր տարիքային խմբերի դիտարկելիս՝ Գծապատկեր 45-ից: Բոլոր տարիքային խմբերում այս համաթիվն ունի դրական արժեք:



Գծապատկեր 45-ից երևում է, որ տվյալ համաթիվն ամենաբարձրն է «61 և ավելի» տարիքային խմբում՝ «36»: Այս տարիքային խմբում, այլ խմբերի համեմատ, նույնպես ամենաբարձրն են «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը»՝ «47» և «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը»՝ «33»:

2015թ. և 2016թ. համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» 2016թ-ին առավել շատ նվազել է «36-45 տարեկան» տարիքային խմբում (նվազել է «15»-ով): Այս տարիքային խմբում այն ամենացածրն է՝ «24»: Նշենք, որ այս տարիքային խմբում բոլոր համաթվերը նույնպես ամենացածրն են:

Հիշեցնենք, որ բոլոր տարիքային խմբերից «36-45 տարեկան» խմբում «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» նույնպես ամենացածրն է:

2016թ. **«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը»** առավել բարձր է «18-25 տարեկան» և «26-35 տարեկան» տարիքային խմբերում, որոնց գնահատմամբ այն կազմել է «33» (տես Գծապատկեր 46):



2015թ.-ի համեմատ 2016թ-ին այս համաթվի բոլոր ցուցիչները նվազել են, բայց առավել մեծ չափով նվազել է «18-25 տարեկան» տարիքային խմբում («14»-ով):

2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նվազել է բոլոր տարիքային խմբերում (տես Գծապատկեր 47):



Ամենաշատը այն նվազել է «36-45 տարեկան» («22»-ով) և «18-25 տարեկան» («19»-ով) տարիքային խմբերում: 2016թ. այս համաթիվը բոլոր տարիքային խմբերում ունի դրական արժեքներ:



Գծապատկեր 48-ում ներկայացված է «Ոստիկանության վստահության համաթիվը»՝ ըստ հարցվողների կրթության:

Ինչպես տեսնում ենք՝ կրթական մակարդակի աճին զուգահեռ նվազում են «Ոստիկանության վստահության համաթվի» ցուցիչները: Այսպես՝ ըստ 2016թ-ի տվյալների՝ «Բարձրագույն» կրթություն ունեցողների մոտ այն ամենացածրն է՝ «20»: Այն առավել բարձր է «Թերի միջնակարգ (8-ամյա)» կրթություն ունեցողների շրջանում՝ «57»: Գծապատկեր 48-ից երևում է, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ ավելի շատ նվազել է «տարրական» («17»-ով) և «բարձրագույն» («14»-ով) կրթություն ունեցողների խմբերում: Այն աճել է «ետբուհական» («21»-ով) և «թերի միջնակարգ» («9»-ով) կրթություն ունեցողների շրջանում:

2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» նույնպես ունի կրթության մակարդակի աճին զուգահեռ նվազելու միտում (տես Գծապատկեր 49):



«Թերի միջնակարգ (8-ամյա)» կրթություն ունեցողների խմբի գնահատմամբ այն կազմում է «59», իսկ «Բարձրագույն» կրթություն ունեցողների խմբում՝ «15»: Այս համաթվի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016թ.-ին կրթական 7 խմբերից 4-ում ցուցանիշը նվազել է: Ամենաշատը նվազել է «տարրական» (նվազել է «17»-ով) և «բարձրագույն» (նվազել է «11»-ով) կրթական ենթախմբերում: Դրական ցուցիչն առավել շատ աճել է «ետբուհական» (այն աճել է «29»-ով) կրթություն ունեցողների շրջանում:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» առավել բարձր ցուցանիշներ ունի «ետբուհական» («70») և «տարրական» («53») կրթություն ունեցողների մոտ, իսկ առավել ցածրը՝ «միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների շրջանում՝ «32» (տես Գծապատկեր 50): Համեմատելով 2015թ ուսումնասիրության արդյունքների հետ՝ նկատում ենք, որ այս համաթվի ցուցիչները 2016թ-ին նվազել են 7 ենթախմբերից 3-ում: Առավել շատ այն նվազել է «բարձրագույն» կրթություն ունեցողների մոտ (նվազել է «11»-ով), ամենաշատը աճել է «ետբուհական» (աճել է «37»-ով) և «տարրական» (աճել է «22»-ով) կրթություն ունեցողների շրջանում:



Գծապատկեր 51-ից երևում է, որ «**Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը»** 2016թ.-ին 2015թ-ի համեմատ 7 կրթական ենթախմբերից 6-ում նվազել է: Ամենաշատը նվազել է «տարրական» («55»-ով) և «բարձրագույն» («21»-ով) կրթություն ունեցողների շրջանում: Ցուցչի աճ տեղի է ունեցել միայն «թերի միջնակարգ» կրթություն ունեցողների գնահատմամբ՝ այն աճել է «8»-ով: Նշենք նաև, որ 2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» բոլոր կրթական ենթախմբերում դրական ցուցիչներ ունի: Այն ամենաբարձրն է «թերի միջնակարգ»՝ «71», իսկ ամենացածրը՝ «բարձրագույն» («9») կրթություն ունեցողների շրջանում:



Դիտարկելով **«Ոստիկանության վստահության համաթիվը»,** ըստ հարցված-ների տնտեսական դրության (տես Գծապատկեր 52), կարելի է նկատել, որ բոլոր խմբերում այն ունի դրական արժեքներ:



2015թ. համեմատ 2016թ. նկատվում է համաթվի աճ՝ տնտեսական դրության բարելավմանը զուգահեռ: Այսպես՝ այն հարցվողների խմբում, ովքեր իրենց սոցիալ-տնտեսական մակարդակը բնորոշել են «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» պատասխանով, այն կազմում է «30», իսկ «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» խմբի կողմից՝ «35»: 2015թ. և 2016թ. տարիների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» ըստ տնտեսական դրության բոլոր խմբերում նվազել է: Այն առավելապես նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբում («11»-ով): Ընդհանուր առմամբ՝ համաթվի ցուցիչները նվազել են «7»-ից մինչև «11»-ի սահմաններում:

2016թ. **«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը»** առավել բարձր է «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» խմբում և կազմում է «38», իսկ առավել ցածր է «Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբի գնահատմամբ՝ «28» (տես Գծապատկեր 53):



2015թ-ի համեմատ 2016թ-ին այս համաթվի ցուցիչները բոլոր ենթախմբերում նվազել են: Ամենաշատը այն նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» ենթախբում (նվազել է «10»-ով):

2016թ **«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը»** առավել ցածր է «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» ՝ «23» և «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար»՝ «24» խմբերում (Գծապատկեր 54):



2015թ-ի համեմատ 2016թ-ին այս համաթիվը նվազել է բոլոր խմբերում. այն ամենաշատը նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» («19»-ով) և «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» («18»-ով) ենթախմբերում:

2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» առավել բարձր է «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբում. այն կազմում է «42» (Գծապատկեր 55): 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին այս համաթիվը 4 խմբերից 3-ում նվազել է: Այն ամենաշատը նվազել է «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» խմբում («10»-ով): Ցուցանիշը աճելի է միայն «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» («1»-ով) ենթախմբում:



2016թ. հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընտանիքի միջին ամսական եկամտի և «Ոստիկանության վստահության համաթվի» միջև կա որոշակի կախվածություն՝ եկամտի աճին զուգահեռ համաթիվը նվազում է (տես Գծապատկեր 56):



2016թ. **«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը»** ամենաբարձրն է «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների խմբում՝ «33» , իսկ ամենացածրն է «350001 դրամից ավելի» խմբում՝ «25» (Գծապատկեր 57):



Հետաքրքրական է այն հանգամանքը, որ 2016թ. այս ցուցիչները առավել ցածր են «350001 դրամից ավելի» և «150001-ից մինչև 350000 դրամ» խմբերում: Այս համաթվի ցուցիչները 2016թ.-ին, 2015թ.-ի համեմատ բոլոր խմբերում նվազել են: Ամենաշատը նվազել է «35001-ից մինչև 65000 դրամ» («8»-ով) և «150001-ից մինչև 350000 դրամ» («7»-ով) խմբերում: Առավել քիչ նվազել է «350001 դրամից ավելի» խմբում՝ «2»-ով:

2016թ. **«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը»** նույնպես ունի նույն միտումը՝ այն ամենաբարձրն է «350001 դրամից ավելի» խմբում՝ «32» և ամենացածրն է «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների խմբում՝ «20» (Գծապատկեր 58):



Այս համաթվի ցուցիչների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր խմբերում 2016թ.-ին այն նվազել է 2015թ. համեմատ:

2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» ամենաբարձրն է «35001-65000 դրամ» միջին ամսական եկամուտ ունեցողների շրջանում՝ «39», իսկ ամենացածրը՝ «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների շրջանում՝ «31» (Գծապատկեր 59):



2015թ.-ի համեմատ 2016թ. տվյալ համաթիվը բոլոր խմբերում նվազել է՝ բացառությամբ «35001-ից մինչև 65000 դրամ» եկամուտ ունեցողների խմբի, որտեղ այն մնացել է անփոփոխ:

Դիտարկելով «Ոստիկանության վստահության համաթիվը», ըստ հարցվածների խավի պատկանելության, նշենք, որ բոլոր խավի ներկայացուցիչների մոտ այն ունի դրական ցուցիչներ (Գծապատկեր 60):



2015թ. համեմատ 2016թ.այս ցուցիչը նվազում է՝ կախված հարցվողների խավից: Այն առավել բարձր է «միջին խավի վերին հատվածին» իրենց դասող հարցվածների խմբում («37»): Ամենացածրը, համապատասխանաբար, «չքավոր» խավին իրենց դասող հարցվածների խմբում է՝ «19»:

Գծապատկեր 60-ը դիտարկելիս երևում է, որ 2015թ. հետազոտության արդյունքների հետ համեմատած, 2016թ. «Ոստիկանության վստահության համաթվի» ցուցիչներում նույնպես առկա են նվազման միտումներ: Բացառություն է կազմում միայն «վերին խավին» իրենց դասող հարցվածների պատասխանները՝ նրանք ունեն դրական միտում, աճել է «7»-ով:

2016թ. **«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը»** ամենացածր ցուցիչը ունի «միջին խավի ստորին հատված» և «միջինից ցածր» («19») խմբերում, իսկ ամենաբարձրը՝ «միջին խավի վերին հատվածին» խմբում («40») (Գծապատկեր 61):



2015թ.-ի համեմատ 2016թ. այս համաթիվը աճել է միայն երկու խմբերում՝ «վերին խավի» («20»-ով) և «միջին խավի վերին հատված» («2»-ով) խմբերում: Այս համաթվի ցուցիչը ամենաշատը նվազել է «միջին խավի ստորին հատված» (նվազել է «15»-ով) խմբում:

2016թ. **«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթվի»** ցուցանիշը նույնպես ամենացածրն է «միջին խավի ստորին հատված»՝ «14» և «չքավոր»՝ «15», խմբերում, իսկ ամենաբարձրը՝ «միջին խավի միջին հատվածում»՝ «33» և «վերին խավի» խմբում՝ «40» (Գծապատկեր 62):



Տվյալ համաթիվը 2015թ.-ի համեմատ աճել է «վերին խավ» նշողների խմբում (աճել է «13»-ով): Մնացած խմբերում այն նվազել է: Ամենաշատը այն նվազել է «միջին խավի ստորին հատված» խմբում՝ «24»-ով:

2016թ. **«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը»** ամենացածրն է «չքավոր»՝ «20» և «վերին խավ»՝ «22» խմբերում, իսկ ամենաբարձրը՝ «միջին խավի վերին հատվածում»՝ «42» (տե՛ս Գծապատկեր 63):



2016թ.-ին՝ նախորդ տարվա ուսումնասիրության արդյունքների համեմատ այս համաթիվը գրեթե բոլոր խմբերում նվազել է՝ բացառությամբ «միջին խավի վերին հատված» (աճել է «1»-ով) խմբի: Ամենաշատը այն նվազել է «վերին խավ» նշողների խմբում՝ «12»-ով:

Վերոնշյալը հիմք է տալիս փաստելու, որ խավի պատկանելությունը ազդեցություն ունի «Ոստիկանության վստահության համաթվի» վրա և որքանով այն ցածր է այնքանով այս համաթիվը նվազում է:

«Ոստիկանության վստահության համաթվի» հաշվարկի հիմքում ընկած ուսումնասիրության արդյունքները կարելի է գտնել Հավելված 3-ում (2016թ.) և Հավելված 4-ում (2015թ.):

ԱՄՓՈՓՈՒՄ

Ա. «Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) կամայականության համաթիվ»

«Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» բնութագրում է քաղաքացիների հետ հարաբերություններում իրավապահ մարմինների կամայականության աստիճանը, այսինքն՝ իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցնող ապօրինությունների մակարդակը:

Կամայականության համաթվի հաշվարկը կառուցվում է երեք բաղադրիչների (բաղկացուցիչների) հիման վրա.

«Քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» (ՔՄՀ) հաշվարկվում է «Հնարավո՞ր է արդյոք, որ Դուք կամ Ձեր մտերիմները տուժեք իրավապահ մարմինների կամայականություններից» և «Անձամբ Դուք որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգում իրավապահ մարմինների կամայականություններից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այն բնութագրում է ոստիկանության ապօրինություններից տուժածների խմբերը և հասարակության մտահոգության աստիճանը

«Անձնական պաշպանվածության համաթիվը» հաշվարկվում է «Հնարավո՞ր է արդյոք, որ Դուք կամ Ձեր մտերիմները տուժեք իրավապահ մարմինների կամայականություններից» և «Անձամբ Դուք որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգում իրավապահ մարմինների կամայականություններից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այս համաթիվը բնութագրում է ոստիկանության ապօրինություններից հարցվողների անհատական մտահոգվածության աստիճանը:

«Անձնական մտահոգվածության համաթիվը» հաշվարկվում է «Հնարավո՞ր է արդյոք, որ Դուք կամ Ձեր մտերիմները տուժեք իրավապահ մարմինների կամայականություններից» և «Անձամբ Դուք որքանո՞վ եք Ձեզ պաշտպանված զգում իրավապահ մարմինների կամայականություններից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այն բնութագրում է ոստիականության ապօրինի գործելու դեպքում առկա իրավական պաշտպանության արդյունավետությունը:

Հիշեցնենք, որ սույն հետազոտության շրջանակում համաթվերը գտնվում են «-100»-ից մինչև «+100» միջակայքում: Եթե որևէ համաթիվ մեծ է «0»-ից, ապա դա նշանակում է, որ ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ հասարակությունում գերակշռում են «դրական» գնահատականները, իսկ «0»-ից ցածրի դեպքում՝ բացասական գնահատականները:

2016թ. իրականացված հետազոտության արդյունքներով՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» ՀՀ-ում կազմել է «-6», որը 2015թ. համեմատ նվազել է «7»-ով (2015թ. կազմել էր «1»):

Բացասական փոփոխություններ են տեղի ունեցել նաև համաթվի հաշվարկի հիմքում ընկած բոլոր երեք բաղադրիչներում: Այսպես՝ «քաղաքացիների մտահոգվածության համաթիվը» 2015թ. համեմատ 2016թ. նվազել է «8»-ով (2016թ. այն կազմել է «-30», իսկ 2015թ. կազմում էր «-22»): Մեկ այլ՝ «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվի» բաղկացուցիչ հանդիսացող «Անձնական անպաշտպանվածության համաթիվը» 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ նվազել է «12»-ով (2016թ. կազմել է «-7», իսկ 2015թ. կազմում էր «5»): Իսկ «Անհատական մտահոգվածության համաթիվը» (որը նույնպես հանդիսանում է «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» բաղկացուցիչ) 2015թ. համեմատ 2016թ. նվազել է «3»-ով (2016թ. կազմել է «17», իսկ 2015թ. կազմում էր «20»):

Վերոնշյալ տվյալները ցույց են տալիս, որ 2015թ. համեմատ 2016թ. ՀՀ-ում աճել են քաղաքացիների կողմից իրավապահ մարմինների գործողությունները, որպես ապօրինություններ ընկալելու մակարդակը:

Իրավապահ մարմինների (ոստիկանություն, դատարաններ, դատախազություն) նկատմամբ հասարակական վստահությունը նույնպես նվազել է **2016թ. 2015թ համեմատ(2016թ.՝«-3» և 2015թ.՝«11»):**

Թե 2016թ., թե 2015թ. քաղաքացիները շատ լուրջ խնդիր և մտահոգիչ են համարում իրավապահ մարմինների կամայականությունները և անօրինականությունները, որը կազմում է առավել բացասական գնահատականի կեսից ավելին (2016թ.՝ «-58» և 2015թ.՝ «-56»): Այսպիսով՝ որևէ դրական տեղաշարժ հանրային ընկալումների մեջ ոստիկանության գործողությունների վերաբերյալ տեղի չի ունեցել:

Միևնույն ժամանակ 2015թ. համեմատ 2016թ., հարցվողների գնահատմամբ, ավելի է մեծացել ՀՀ իշխանությունների կողմից իրավապահ մարմինների օգտագործումը որպես ճնշման միջոց քաղաքական ընդդիմադիրների նկատմամբ (2016թ.՝ «-27» և 2015թ.՝ «-21»): Նկատենք, որ այս երևույթը բնութագրող ցուցիչները շարունակում են ունենալ մեծ բացասական արժեքներ:

«Իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը» տարբեր է ըստ մարզերի, բնակավայրերի տիպի (քաղաքային և գյուղական), տարիքային խմբերի, կրթության, սեռի և սոցիալ-տնտեսական դրության:

2016թ. ըստ մարզերի «Իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը» դիտարկելիս նկատելի է, որ այն առավել բացասական է Երևան քաղաքում՝ «-20», Շիրակի և Արագածոտնի մարզերում՝ «-7»-ական և Լոռու մարզում՝ «-6»: Առավել դրական է Վայոց Ձորի («19»), Տավուշի («17») և Գեղարքունիքի («10») մարզերում: 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը» մնացած մարզերում դրական է, սակայն 2015թ արդյունքների համեմատ այն նվազել է (Վայոց Ձորի («6»-ով) և Գեղարքունիքի մարզերում («9»-ով): 2015թ. համեմատ 2016թ. համաթվերն[7] առավել նվազել են Լոռու, Արմավիրի

[7] «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվ», «Քաղաքացիների մտահոգվածության համաթիվ», «Անձնական անպաշտպանվածության համաթիվ», «Անհատական մտահոգվածության համաթիվ»

և Արարատի մարզերում (այս մարզերի ցուցիչների նվազումները տատանվում են «-12»-ից մինչև «-32» սահմաններում):

Այսպիսով՝ ստացված տվյալներից կարող ենք ենթադրել, որ ոստիկանության գործողությունները առավել շատ անօրինական են գնահատում Երևան քաղաքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզերի բնակիչները: Երկու տարիների ընթացքում նշված մարզերի բնակիչների ընկալումներում ավելի շատ աճել են բացասական վերաբերմունքը և գնահատականները, ըստ հարցվածների՝ տեղի է ունեցել ոստիկանության նկատմամբ վստահության մակարդակի նվազում, այդ կառույցների՝ որպես քաղաքական հետապնդման մեխանիզմի կիրառման աճ, ոստիկանության կամայականության աճ, և իրավապահ մարմինների կամայականություններից պաշտպանվելու մեխանիզմների նկատմամբ աճել է անվստահությունը:

«Իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը» զգալիորեն տարբերվում է նաև ըստ բնակավայրի տիպի:

2015թ-ի հետազոտության արդյունքների համեմատ 2016թ.-ին և քաղաքային, և գյուղական համայնքների բնակիչների ընկալմամբ ոստիկանության ապօրինությունների մակարդակը աճել է: Այն ավելի շատ աճել[8] է քաղաքային բնակչության շրջանում «8»-ով դառնալով «-12» (2015թ՝ «-4»), սակայն այդ միտումն է նկատվում նաև գյուղական համայնքների բնակչության շրջանում՝ տվյալ համաթվի ցուցիչը նվազել է «5»-ով՝ դառնալով «8» (2015թ.՝ «-4»):

«Քաղաքացիների մտահոգության համաթիվը» բոլոր բնակավայրերի տիպերում ունի բացասական ցուցանիշ: Իսկ «Անհատական մտահոգության համաթիվը» բոլոր բնակավայրերի տիպերում ունի դրական ցուցանիշ: Այնուամենայնիվ բացասական և առավել բացասական ցուցանիշ ունեն քաղաքային բնակավայրերի համաթվերը: Դրա հավանական պատճառներից կարող է հանդիսանալ այն, որ քաղաքային բնակավայրերում բնակչությունն առավել հաճախ է առնչություն ունենում իրավապահ մարմինների հետ և ավելի ակտիվ է մասնակցում սոցիալ-տնտեսական և քաղաքացիական գործընթացներում, քան գյուղական բնակավայրերի բնակչությունը:

Այսպիսով՝ հարցվողների ընկալմամբ՝ քաղաքային բնակչությունն առավել խոցելի է և անպաշտպան է իրեն զգում, քան՝ գյուղական բնակավայրերում ապրողները:

Նշենք նաև, որ «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» գնահատականներն ակնհայտորեն տարբերվում են իգական և արական սեռի ներկայացուցիչների շրջանում:

2016թ. արական սեռի ներկայացուցիչները առավել բացասական են գնահատել «Իրավապահ մարմինների կամայականությունների համաթիվը» (այն կազմել է

[8] «Աճել»՝ բացասական ցուցիչների աճ և/կամ դրական ցուցիչների նվազում:

«-11»[9])՝ ի տարբերության իգական սեռի ներկայացուցիչների (այն կազմել է «-4»[10]): Նույն միտումներն առկա են նաև բաղկացուցիչ համաթվերի պարագաներում: Համեմատելով 2015թ. հետազոտության արդյունքները 2016թ. հետ՝ ակնհայտ է դառնում, որ 2016թ. ավելի կտրուկ նվազել են համաթվերի ցուցիչները արական սեռի ներկայացուցիչների մոտ (ցուցիչների նվազումը տատանվում է «-6»-ից մինչև «-13» սահմաններում):

Համաթվերն ըստ սեռերի դիտարկելիս կարևոր ենք համարում հաշվի առնել այն հիպոթեզը, որ արական սեռի ներկայացուցիչներն առավել հաճախ են առնչվում իրավապահ մարմինների ներկայացուցիչների հետ, քան՝ իգական սեռի ներկայացուցիչները, ուստի՝ տղամարդկանց պատասխանները և դատողություններն ավելի շատ են հիմնված սեփական փորձի կամ դիտարկումների վրա:

Այսպիսով՝ դիտակելով հարցվածների դիրքորոշումը «Իրավապահ մարմինների կամայականությունների համաթվի» վերաբերյալ՝ ըստ հարցվածների սեռի, նկատելի է, որ իրավապահ մարմինների կամայականություններից ավելի շատ իրենց խոցելի են զգում տղամարդիկ, քան կանայք:

Տարիքի գործոնը նույնպես իր ազդեցությունն ունի «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» ընկալումների և դիրքորոշումների վրա: Այսպես՝ հիմնվելով 2016թ. հետազոտության արդյունքների վրա, կարող ենք փաստել, որ իրավապահ մարմինների կամայականություններից առավել խոցելի են իրենց զգում 36-45 և 45-60 տարեկանները («36-45»-2016թ.՝ «-10», 2015թ.՝ «13», «45-60»-2016թ.՝«-9», 2015թ.՝ «0»), իսկ առավել պաշտպանված միայն «26-35» տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչները (2016թ.՝ «1», 2015թ.՝ «3»): Հարկ ենք համարում նշել, որ 2016թ. 26-35 տարիքային խմբի ներկայացուցիչների «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» ցուցիչը նախորդ տարվա համեմատ նույնպես նվազել է «2»-ով: 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ բոլոր տարքիային խմբերում «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» նվազել է:

Իրավապահ մարմինների կամայականության համաթիվն ըստ հարցվողների կրթության դիտարկելիս նկատելի է հետևյալ օրինաչափությունը. որքանով հարցվածների կրթության աստիճանը բարձրանում է, այնքանով աճում է իրավապահ մարմինների կամայականության և անօրինականության վերաբերյալ նրանց բացասական ընկալումը:

Այսպես 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» բացասական գնահատականները ստացվել են «ետբուհական (գիտ. աստիճան)», «բարձրագույն կրթություն», «թերի բարձրագույն» և «միջին մասնագիտական» կրթություն ունեցողներից (համապատասխանաբար՝ «-27», «-10», «-19», «-19» և «-10»): Այս ամենը կրկնում է 2015թ. հետազոտության արդյունքների հիման վրա ստացած պատկերը:

---

[9] 2015թ.՝ «-2»:

[10] 2015թ.՝ «2»:

Հարցվողների սոցիալական ապահովվածության վիճակը նույնպես ազդեցություն ունի հաշվարկվող համաթվի վրա: **2016թ.** հետազոտությունը ցույց է տալիս, որ իրավապահ մարմինների գործունեությունն առավել կամայական և ապօրինի է ընկալվում իրենց սոցիալապես անապահով համարողների խմբերում: Այսպես՝ 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» ավելի շատ բացասական է տնտեսապես առավել վատ պայմաններ ունեցողների մոտ, որոնց գումարը չի բավարարում սնունդ գնելու համար և գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար՝ յուրաքանչյուրի մոտ «-12», և դրական է քիչ թե շատ ապահովվածների մոտ, որոնց գումարը բավարարում է հագուստ, սնունդ և այլ ապրանքներ գնելու համար՝ կամայականության համաթիվը կազմում է «6»:

«Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» վրա ազդեցություն ունի նաև ընտանիքի միջին ամսական եկամտի չափը: 2016թ. «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը», ըստ ընտանիքի միջին ամսական եկամտի, ունի բացասական ցուցիչներ (ցուցիչները տատանվում են «-3» մինչև «-7» միջակայքում) բոլոր խմբերում:

Այն հանգամանքը, թե հարցվողները որ խավի ներկայացուցիչներ են իրենք իրենց համարում նույնպես ազդում է «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» և դրա բաղկացուցիչ համաթվերի վրա:

Ըստ 2016թ-ի հետազոտության տվյալների՝ հարցվողի սոցիալական կարգավիճակի նվազմանը զուգահեռ աճում է իրավապահ մարմինների կամայականությունից և ապօրինություններից նրա տուժող հանդիսանալու հավանականությունը:

Այսպես՝ դրական է համաթիվը միայն վերին խավին («6») և միջին խավի վերին հատվածին («5») դասող հարցվողների մոտ: Իսկ ամենաբարձր բացասական համաթիվը չքավոր խավին («-23») դասող հարցվողների մոտ է: «Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը» 2015թ. արդյունքների համեմատ ամենաշատը նվազել է չքավոր (նվազել է «16»-ով), միջին խավի ստորին հատված (նվազել է «12»-ով), միջին խավի միջին հատված (նվազել է «9»-ով) և միջինից ցածր խավ (նվազել է «8»-ով) ենթախմբերում: Ի հակառակ դրան՝ այն դարձել է դրական կամ բարձրացել է դրական ցուցանիշը վերին խավ (աճել է «27»-ով) և միջին խավի վերին հատված (աճել է 3-ով) ենթախմբերում:

Վերը ներկայացվածը վկայում է այն մասին, որ 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ իրավապահ մարմինների կամայականությունը Հայաստանի բնակչության համար առավել մտահոգիչ խնդիր է դարձել: 2015թ. համեմատ 2016թ.-ին ՀՀ-ում աճել է քաղաքացիների կողմից իրավապահ մարմինների գործողությունները որպես ապօրինություններ ընկալելու մակարդակը:

Այս խնդիրը առավել սուր է Երևան քաղաքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու մարզերի բնակիչների շրջանում:

Ըստ 2016թ. իրականացված հետազոտության արդյունքների՝ իրավապահ մարմինների կամայականություններից առավել խոցելի են քաղաքային համայնքներում բնակվող, արական սեռի, **36-60 տարեկան տարիքային խմբի,**

ետբուհական կրթություն ունեցող, իրենց սոցիալապես անապահով ընկալող խմբի ներկայացուցիչները:

Բ. «Ոստիկանության վստահության համաթիվ»

Ոստիկանության վստահության համաթիվը հանդիսանում է հասարակության զանգվածային տրամադրությունների միտումների ընդհանրացված համաթիվ, որը բնութագրում է ոստիկանության հանդեպ վերաբերմունքի և վստահության, գործունեությունից գոհունակության, քաղաքացի-ոստիկան համագործակցության պատրաստակամության աստիճանի արտացոլումը:

Ոստիկանության հանդեպ վստահության համաթվի[11] հաշվարկը կառուցվում է նույնպես երեք բաղկացուցիչների հիման վրա.

«Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» կառուցվում է «Որքանո՞վ եք բավարարված Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության գործունեությունից» և «Ըստ Ձեզ՝ կարո՞ղ է արդյոք Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությունը պաշպանել Ձեզ/Ձեր ընտանիքին հանցագործներից» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Այս համաթիվը բնութագրում է քաղաքացիների կողմից ոստիկանության գործունեության գոհունակության աստիճանը և նրա գործառույթներից մեկի իրագործման արդյունավետության աստիճանը:

«Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» հաշվարկվում է «Որքանո՞վ եք վստահում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանությանը» և «Ինչպե՞ս եք վերաբերում Ձեր բնակավայրի/համայնքի ոստիկանության աշխատողներին» հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով: Ինչը ներկայացնում է քաղաքացիների կողմից ոստիկանության աշխատակիցների հանդեպ վստահության աստիճանը և վերաբերմունքը:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» կառուցվում է երեք հիմնական հարցերի պատասխանների ընդհանրացված համաթվերի միջին թվաբանականի հաշվարկման միջոցով. «Ըստ Ձեզ՝ արդյո՞ք քաղաքացիները պետք է օգնեն ոստիկանությանը», «Եթե Դուք ծեծի, կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք» և «Որոշ մարդիկ, հանդիսանալով հանցագործության ականատես/վկա, կանչում են ոստիկանությանը: Եթե Դուք ծեծի, կողոպուտի, գողության և այլ նմանատիպ հանցագործությունների ականատես/վկա դառնայիք, արդյո՞ք ոստիկանություն կկանչեիք»: Այս համաթիվը բնութագրում է քաղաքացիների կողմից

[11] Հիշեցնենք, որ սույն հետազոտության շրջանակում համաթվերը գտնվում են «-100»-ից մինչև «+100» միջակայքում: Եթե որևէ համաթիվ մեծ է «0»-ից, ապա դա նշանակում է, որ ուսումնասիրվող խնդիրների վերաբերյալ հասարակությունում գերակշռում են «դրական» գնահատականները, իսկ «0»-ից ցածրի դեպքում՝ բացասական գնահատականները:

ոստիկանության աջակցության պատրաստակամության աստիճանը:

2016թ. հետազոտության արդյունքների համաձայն «Ոստիկանության վստահության համաթիվը» ՀՀ-ում կազմել է «33», որը 2015թ. համեմատ նվազել է «9-ով» (2015թ. այն կազմել էր «42»):

2015թ. համեմատ 2016թ. ընթացքում նվազել են «Ոստիկանության վստահության համաթվի» բաղկացուցիչները: Այսպես՝ «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» (ՈԳԳ) 2016թ.-ին 2015թ.-ի համեմատ նվազել է «5»-ով (2015թ. այն կազմում էր «36», իսկ 2016թ.՝ «31»): «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» (ՈՀՊ) նվազել է «1»-ով՝ 2015թ.-ին կազմում էր «42», իսկ 2016թ.-ին՝ «41»: Բաղկացուցիչներից առավել մեծ նվազումը տեղի է ունեցել «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթվի» (ՈՀՎ) ցուցիչներում: Եթե 2015թ. ՈՀՎ-ը համաթիվը կազմում էր «49», ապա 2016թ.-ին այն նվազել է «22»-ով և դարձել է «27»:

Վերոնշալ արդյունքները ցույց են տալիս, որ ՀՀ-ի բնակչության շրջանում 2015թ. համեմատ 2016թ. տեղի է ունեցել ոստիկանության հանդեպ վստահության նվազում և բացասական վերաբերմունքի աճ:

«Ոստիկանության վստահության համաթիվը» նաև դիտարկվել է՝ ըստ մարզերի, բնակվայրի տիպի, սեռի, տարիքի, կրթության և սոցիալ-տնտեսական դրության:

«Ոստիկանության վստահության համաթիվը» ըստ մարզերի դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ 2016թ. հետազոտության արդյունքների համաձայն՝ այդ համաթիվն ամենացածրն է Երևան քաղաքում՝ «22»: Այն ամենաբարձրն է Տավուշի («57») և Վայոց Ձորի («52») մարզերում: **2015թ. համեմատ 2016թ. «Ոստիկանության վստահության համաթիվը» ավելի շատ նվազել է Լոռու, Արարատի,** Գեղարքունիքի և Շիրակի մարզերում (այս մարզերի ցուցիչների նվազումները տատանվում են «-10»-ից մինչև «-18» սահմաններում): 2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» նույնպես ամենացածրն է Երևան քաղաքում՝ «21», այնուհետև Լոռու մարզում՝ «28», Շիրակի, Արարատի և Արագածոտնի մարզերում՝ «32», իսկ ամենաբարձր դրական ցուցանիշը Վայոց Ձորի ՝ «55» և Տավուշի՝ «50» մարզերում է: 2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նույնպես ամենացածրն է Երևան քաղաքում՝ «10», ապա Շիրակի մարզում՝ «23» և Կոտայքի մարզում՝ «27», իսկ ամենաբարձր դրական ցուցանիշը Վայոց Ձորի մարզում է՝ «67»: 2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» բոլոր մարզերում նունպես ունի դրական արժեքներ: Այն համեմատաբար ցածր է Շիրակի՝ «28», Լոռու՝ «32» և Կոտայքի՝ «32» մարզերում և ամենաբարձրը Գեղարքունքի մարզում է՝ «52»:

Այսպիսով՝ հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ կարող ենք փաստել, որ ոստիկանության վստահության համաթիվը չնայած գտնվում է ցուցիչների դրական միջակայքում, այնուամենայնիվ ամենացածրն է Երևան քաղաքում, Շիրակի և Լոռու մարզերում: Վստահության համաթվերը ավելի շատ նվազել են Լոռու, Արարատի, Գեղարքունիքի և Շիրակի մարզերում և Երևան քաղաքում:

Երկու տարիների ընթացքում այս մարզերի և Երևան քաղաքի բնակչության

շրջանում ոստիկանության հանդեպ վստահության համաթիվը վկայում է այն մասին, որ ըստ հարցվողների՝ ոստիկանությունը չի կարողանում պատշաճ կերպով կատարել իր պարտականությունները:

Համադրելով այս համաթվի նվազումը «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» նվազման հետ՝ հանգում ենք եզրակացության, որ ըստ հարցվողների՝ առկա է քաղաքական հետապնդման նպատակով իրավապահ մարմինների՝ որպես միջոցի կիրառման, և ոստիկանության կողմից կամայականությունների աճ, միաժամանակ իրավապահ մարմինների կամայականություններից պաշտպանվելու՝ գոյություն ունեցող մեխանիզմների նկատմամբ վստահության խիստ անկում:

Այնուամենայնիվ հասարակությունը դեռևս հակված է համագործակցելու ոստիկանության հետ, այդ կառույցի թերությունների առկայությամբ հանդերձ: Նման եզրահանգման համար հիմք է հանդիսանում այն, որ ամենաքիչը նվազել է «Ոստիկանության վստահության համաթվի» բաղկացուցիչ հանդիսացող «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը»:

Դիտարկելով 2016թ. «Ոստիկանության հանդեպ վստահության համաթիվը»՝ ըստ բնակավայրերի տիպերի, կարող ենք նշել, որ բոլոր տիպի բնակավայրերում այն ունի դրական ցուցանիշ (քաղաքային բնակավայրերում՝ «25», իսկ գյուղական բնակավայրերում ՝«46»): 2015թ. արդյունքների համեմատ այս համաթվի ցուցիչները գրեթե բոլոր տիպի բնակավայրերում նվազել են «4»-ից «19»-ի սահմաններում:

Գրեթե բոլոր համաթվերի ցուցիչները քաղաքային բնակավայրերում ավելի ցածր են, քան գյուղական բանակավայրերում: Հավանական պատճառներից կարող են հանդիսանալ ինչպես գյուղական բնակավայրերում ենթամշակութային առանձնահատկությունները, այնպես էլ ոստիկանության հետ առնչության փորձի պակասը:

2016թ. «Ոստիկանության վստահության համաթիվը» արական սեռի ներկայացուցիչների կողմից ստացել է «25» արժեք, իսկ իգական սեռի կողմից՝ «35»: Համեմատելով 2015թ. և 2016թ. հետազոտությունների արդյունքում ստացված «Ոստիկանության վստահության համաթվերը» ըստ սեռի՝ նկատելի է, որ երկու սեռերի ներկայացուցիչների մոտ էլ առկա է համաթվի նվազում: Սակայն առավել մեծ նվազում է նկատվում արական սեռի ներկայացուցիչների մոտ (այն նվազել է «12»-ով):

Նշենք, որ բոլոր համաթվերը երկու սեռերի մոտ ունեն դրական արժեք, սակայն իգական սեռի ներկայացուցիչների մոտ բոլոր համաթվերն ավելի բարձր արժեք ունեն, քան արական սեռի ներկայացուցիչների մոտ: Առավել ցայտուն տարբերություն է առկա «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթվի» պարագայում. ցուցանիշները տարբերվում են «20» միավորով՝ իգական սեռի ներկայացուցիչների մոտ այն կազմել է «43», իսկ արական սեռի ներկայացուցիչների մոտ՝ «23»

2016թ. «Ոստիկանության վստահության համաթիվը» բոլոր տարիքային խմբերում ունի դրական արժեք: Սակայն 2015թ. և 2016թ. համեմատական վերլուծությունը

ցույց է տալիս, որ «Ոստիկանության վստահության համաթիվը» 2016թ.-ին առավել շատ նվազել է «36-45 տարեկան» տարիքային խմբում (նվազել է «15»-ով): Այս տարիքային խմբում այն ամենացածրն է՝ «24»: Նշենք, որ այս տարիքային խմբում բոլոր համաթվերը նույնպես ամենացածրն են:

2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» ամենաբարձրն է «18-25 տարեկան» և «26-35 տարեկան» տարիքային խմբերում, որոնց մոտ այն կազմել է «33»: 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին այս համաթվի բոլոր ցուցիչները նվազել են, բայց ամենաշատը նվազել է «18-25 տարեկան» տարիքային խմբում («14»-ով): 2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նվազել է բոլոր տարիքային խմբերում, սակայն ամենաշատը այն նվազել է «36-45» տարեկան» («22»-ով) և «18-25 տարեկան» («19»-ով) տարիքային խմբերում:

Կրթական մակարդակի աճին զուգահեռ նվազում են «Ոստիկանության վստահության համաթվի» ցուցիչները (2016թ.), ինչը նույնպես կրկնում է «Իրավապահ մարմինների կամայականության համաթվի» փոփոխության միտումները:

2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» նույնպես ունի կրթության մակարդակի աճին զուգահեռ նվազելու միտում: Այսպես՝ «թերի միջնակարգ (8-ամյա)» կրթություն ունեցողների խմբի մոտ այն կազմում է «59», իսկ «Բարձրագույն» կրթություն ունեցողների խմբում՝ «15»: Այս համաթվի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016թ.-ին կրթական 7 խմբերից 4-ում ցուցանիշը նվազել է: Ամենաշատը նվազել է «տարրական» («17»-ով) և «բարձրագույն» («11»-ով) կրթություն ունեցողների խմբերում:

«Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» ամենաբարձր ցուցանիշներն ունի «ետբուհական» («70») և «տարրական» («53») կրթություն ունեցողների մոտ, և ամենացածրը՝ «միջնակարգ (10-12-ամյա)» կրթություն ունեցողների շրջանում՝ «32»: Համեմատելով 2015թ. ուսումնասիրության արդյունքների հետ, նկատում ենք, որ այս համաթվի ցուցիչները 2016թ.-ին նվազել են 7 խմբերից 3-ում: Առավել շատ այն նվազել է «բարձրագույն» կրթություն ունեցողների մոտ (նվազել է «11»-ով), և ամենաշատը աճել է «ետբուհական» (աճել է «37»-ով) և «տարրական» (աճել է «22»-ով) կրթություն ունեցողների շրջանում:

2016թ. «Ոստիկանության վստահության համաթիվը» ըստ հարցվածների տնտեսական դրության բոլոր խմբերում նույնպես ունի դրական արժեքներ:

2016թ. նկատվում է «Ոստիկանության վստահության համաթվի» աճ՝ տնտեսական դրության բարելավմանը զուգահեռ: Այսպես՝ այն հարցվողների խմբում, ովքեր իրենց սոցիալ-տնտեսական մակարդակը բնորոշելու համար տվել են «գումարը չի բավարարում սնունդ գնելու համար» պատասխանը, այն կազմում է «30», իսկ «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» խմբի մոտ՝ «35»: **2015թ. և 2016թ. տարիների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ «Ոստիկանության վստահության համաթիվը»** ըստ տնտեսական դրության բոլոր խմբերում նվազել է: Այն ամենաշատը նվազել է «գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբում («11»-ով): Ընդհանուր առմամբ՝ համաթվի ցուցիչները նվազել են «7»-ից մինչև «11»-ի սահմաններում:

2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» ամենաբարձրն է «գումարը բավարարում է սնունդ, հագուստ և այլ ապրանքներ գնելու համար» խմբի մոտ և կազմում է «38», իսկ ամենացածրը՝ «Գումարը բավարարում է միայն սնունդ գնելու համար» խմբի մոտ՝ «28»: 2016թ. «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» ամենաբարձրն է «գումարը բավարարում է սնունդ և հագուստ գնելու համար» խմբում. այն կազմում է «42»:

2016թ. հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ընտանիքի միջին ամսական եկամտի և «Ոստիկանության վստահության համաթվի» միջև կա որոշակի կախվածություն: Այն ամենաբարձրն է «35001-ից մինչև 65000 դրամ» ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցողների խմբում՝ «33», և ամենացածրն է «350001 դրամից ավելին» ընտանիքի միջին ամսական եկամուտ ունեցողների շրջանում՝ «27»:

2016թ. «Ոստիկանության գործունեության գնահատման համաթիվը» ամենաբարձրն է «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների խմբում՝ «33» , և ամենացածրն է «350001 դրամից ավելի» խմբում՝ «25»: 2016թ. «Ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվը» նույնպես ունի փոփոխության նույն միտումը՝ այն ամենաբարձրն է «350001 դրամից ավելի» խմբում՝ «32» և ամենացածրն է «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների խմբում՝ «20»: 2016թ «Ոստիկանության հետ համագործակցության պատրաստակամության համաթիվը» ամենաբարձրն է «35001-65000 դրամ» միջին ամսական եկամուտ ունեցողների շրջանում՝ «39», իսկ ամենացածրը՝ «մինչև 35000 դրամ» եկամուտ ունեցողների շրջանում՝ «31»:

2016թ. «Ոստիկանության վստահության համաթվի», ըստ հարցվածների այս կամ այն խավի պատկանելուն, վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր խավի ներկայացուցիչների մոտ այն ունի դրական ցուցիչներ: 2015թ. հետազոտության արդյունքների հետ համեմատած ՝ 2016թ. «Ոստիկանության վստահության համաթվի» ցուցիչներում նույնպես տեղի են ունեցել նվազման միտումներ:

Վերը ներկայացվածը հիմք է տալիս ենթադրելու, որ ոստիկանությունը ընտրողաբար է կատարում իր պարտականությունները՝ իր ծառայությունները մատուցելիս առավել պարտաճանաչ է կատարում իր պարտականությունները հասարակության տնտեսապես ավելի ապահով հատվածի նկատմամբ **և** ավելի անպարտաճանաչ է հասարակության անապահով հատվածի ներկայացուցիչների նկատմամբ**:**

Այսպիսով՝ ամփոփելով «Իրավապահ մարմինների կամայականության» և «Ոստիկանության վստահության» համաթվերը՝ արձանագրում ենք. չնայած այն հանգամանքին, որ ոստիկանության հանդեպ վերաբերմունքի համաթիվն ունի դրական արժեք, այնուամենայնիվ երկու տարիների (2015թ., 2016թ.) ընթացքում նկատվում է այդ դրական գնահատականի նվազման միտում: Իրավապահ մարմինները 2015թ.-ի համեմատ 2016թ.-ին ավելի շատ են կիրառվել որպես միջոց քաղաքական հետապնդման նպատակով, աճել են ոստիկանության կամայականություններն ու ապօրինությունները: Մյուս կողմից՝ շարունակում

է հրատապ լուծում պահանջող կարևորագույն խնդիրների շարքում մնալ իրավապահ մարմինների կամայականություններից պաշտպանվելու արդյունավետ մեխանիզմների բացակայությունը: Ոստիկանությունն իր ծառայությունները մատուցելու գործում չի դրսևորում անաչառություն և դեռևս շարունակում է ցուցաբերել ընտրողաբար մոտեցում ՀՀ քաղաքացիների այս կամ այն խմբերի հանդեպ: Նշված խնդիրներն առաջին հերթին պետք է լուծի ոստիկանությունը և քաղաքական իշխանությունը, եթե կա իրական ձգտում՝ բարձրացնելու ոստիկանության նկատմամբ հասարակության վստահության մակարդակը:

Տպագրություն՝ «ՄԱՍՏԵՐ ՊՐԻՆՏ» ՏՊԱԳՐԱՏՈՒՆ
041/055/094 400 247
Ամիրյան 18ա
masterprint.am@gmail.com

Շապիկի լուսանկարները՝ «ՖՈՏՈԼՈՒՐ» ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ